

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՈՂՋՈՂՅՆ Ա.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 121-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՉԵԱՆ

Ընթացիկ տարուան նոյեմբերի այս օրերուն, աշխարհով մէկ նիւդաւորուած Ա.Դ. Հնչակեան Մայր Կուսակցութիւնը, կը սօնախմբէ իր հիմնադրութեան 121-րդ տարեդարձը:

Կազմակերպութեամբ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի՝ մեծարանքի շնորհիւ համադրուած մը տեղի պիտի ունենայ նոյեմբեր 22, 2008-ին, երեկոյեան ժամը վեցէն սկսեալ, Կլենտոնի կլոր եկեղեցւոյ մէջ: Այդ առիթով, օրուան հիւր քանախօս հրաւիրուած է Ա.Դ.Հ.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ, ՀՀ Պաշտպանութեան Նախկին Փոխնախարար Վահան Շիրխանեան, երեսնէն:

Երկար, դառն ու նուիրական եղաւ Ա.Դ.Հնչակեան Կուսակցութեան անցած ազատագրական ուղին:

Տարեբային չեղաւ անոր հիմնադրութիւնը 1887ին, ժընեւի մէջ:

Պարզ յիշեցման կարգով արձանագրեմք, որ 1746ին, շուրջ երկու դար տեւած բուրբ ու պարսիկ պատերազմին յաջորդող խաղաղութեան համաձայնագրի ստորագրութեամբ բերք Օսմանեան տիրապետութեան տակ անցաւ Արեւմտահայ Հայաստանը, հայ ազգաբնակչութիւնը տակաւ սկսաւ շնչահեղձ դառնալ: Արեւմտահայաստանի դառնագոյն պատմութիւնը, միջնադարեան ճակատագրական ճակատագրութիւնը, սկսած էր այդ բուրակներէն:

Դարեր ամբողջ, անլուր գրկանմենքու եմբարկուեցաւ հայրը:

Հայաճուեցաւ: Մասսայական ջարդերու եմբարկուեցաւ: Տեղական օրէնքի եւ կամ միջազգային գետնի վրայ, ինքնաշարժութեան ոչ մէկ միջոց ունեցաւ: Երոպական տէրութիւններ, ինչպէս միջոց, կլանուած մնացին իրենց հատուածական շահերով եւ բուրբ սիրաշահեցաւ դիւանագիտական խաղերով:

Պետականօրէն կազմակերպ-

Շարք էջ 19

## ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՍՕՏԱԼՈՒՏ ՉԷ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆԵՐԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ԸՆԴԱՌԱՋԵԼ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀՐԱԷՐԻՆ

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համախաղաղահանրու Նոյեմբեր 17-ի տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին, ամերիկացի համաձայնագրահան Մեթիւ Պրայզա հերքեց Հայաստանի մէջ հնչած այն մեկնաբանութիւնները, թէ մէկ ամիսէն Լեռնային Ղարաբաղի հարցով համաձայնագիր պիտի կնքուի, որու շարքին՝ զաղտնի արձանագրութիւն, որով Հայաստան կ'ստանան շարք մը պարտաւորութիւններ:

«Այդ բացարձակապէս ճիշդ չէ: Մենք, բնականաբար, կը փափաքէինք, որ համաձայնագրի վերջին փուլին մէջ ըլլայինք, բայց այդպէս չէ», - Սերժ Սարգսեանի հետ հանդիպումէն յետոյ կայացած ասուլիսի ժամանակ ըսաւ Մեթիւ Պրայզա: «Ես կրնամ ընդամենը ըսել, որ Նոյեմբերի 2-ին Մոսկուայի մէջ տեղի ունեցած հանդիպումէն յետոյ, երկու նախագահներու տրամադրուածութիւնը զգալիօրէն բարելաւուած է»:

Ֆրանսացի համախաղաղահան Պեռնար Ֆասիէ, իր հերթին յայտնեց, թէ կարեւոր է հասկնալ, որ իրենք այժմ կը գտնուին խաղա-



Ձախէն՝ Եւրոպի Մերձկալով, Մեթիւ Պրայզա եւ Պեռնար Ֆասիէ Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին կը ցուցադրեն իրենց «միասնականութիւնը»

ղութեան համաձայնագրի մշակման նախնական փուլին մէջ:

Ան յայտարարեց, «Կողմերու համաձայնութիւնը խնդրի կարգաւորման հիմնարար սկզբունքները»

րու շուրջ չի նշանակեր խաղաղութեան համաձայնագրի մշակում:

Հիմնարար սկզբունքներու եւ խաղաղութեան հիմնարար սկզբունքները»

Շարք էջ 4

## «ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԴԷՍ ՎԵՐՁԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՎՏԱՆԳԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ»

ԵԱՀԿ-ի մամուլի ազատութեան հարցերով ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտի Չորեքշաբթի, Նոյեմբեր 19-ին մտահոգութիւն յայտնած է «Հետք» էլեկտրոնային պարբերականի գլխաւոր խմբագիր, «Հետքնոյ լրագրողներ» կազմակերպութեան նախագահ Էդիկ Բաղդասարեանի դէմ կատարուած յարձակման առիթով (լուրը տեսնել էջ 3):

«Լրագրողներու դէմ բռնութիւնը սովորական յանցագործութիւն չէ, որովհետեւ այն կը վտանգէ ժողովրդավարութեան հիմնարար հաստատութիւններէն մէկը՝ ազատ մամուլը», - Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանին յղած նամակի մէջ գրած է Հարաշտի:

ԵԱՀԿ-ի մամուլի ազատութեան հարցերով ներկայացուցիչը նաեւ անդրադարձած է Հայաստա-

## ՊՈԼՍՈՅ «ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԸ ԿԸ ՆՇԷ ԻՐ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Թուրքիոյ մէջ հրատարակուող ամենահին հայալեզու թերթը՝ «Ժամանակ» օրաթերթը կը սօնէ է իր հարիւրամեայ յոբելեանը, որուն անդրադարձած է «Ֆրանսիկէս» միջազգային լրատու գործակալութիւնը:

«Ժամանակ» թերթը հիմնադրուած է Միսակ եւ Սարգիս Գոչունեան եղբայրներու կողմէ 1908 թուականի Հոկտեմբեր 28-ին՝ Երիտթուրքերու յեղափոխութենէն երեք ամիս ետք:

«Ֆրանսիկէս» կը գրէ, որ Առաջին աշխարհամարտի տարիներուն, երբ հարիւր հազարաւոր հայեր Անատոլի մէջ կոտորածի կենթարկուէին, 15 հազար տաղանակ ունեցող թերթը կը շարունակէր լրջ տեսնել, թէեւ ստիպուած էր խուսափել քաղաքական թեմաներէ, սահմանափակուելով հիմնականին մէջ մշակութային նիւթերու վրայ:

«Մենք շարունակեցինք տպագրուել 1915 թուականին՝ չնայած սիւնակագիրներէն մէկի կորստին», - «Ֆրանսիկէս»-ին պատմած է «Ժամանակ»-ի ներկայիս



«Ժամանակ»-ի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեան

գլխաւոր խմբագիր Արա Գոչունեան՝ թերթի հիմնադիրներէն Սարգիս Գոչունեանի ծոռը:

«Ժամանակ»-ը շարունակած է տպագրուել նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ 1955 թուականի սեպտեմբերեան խռովութիւններու ժամանակ, երբ

Շարք էջ 4

**ՍՈՑԵԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**  
**121-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**  
 Օրուան Գլխաւոր Բանախօս՝ ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ  
 ՇԱԲԱԹ, ՆՈՅՏԵՄԵՐ 22, 2008 ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 6-ԻՆ  
 ԿԼԵՆՏԵԼԻ ԿԼՈՐ ԵԿԵՂԵՑԻ 333 E. COLORADO BLVD. GLENDALE

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՐԲ ՉՏԱՊԱԼՈՒԻԱԾ ԱՄԵՆ ՄԻ ՕՐԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Աներկբայ է, որ վերջին շրջանում Հայաստանի ներքաղաքական կեանքի օրակարգային թեման Ղարաբաղն է: Իհարկէ, ներքաղաքական կեանք Հայաստանում, որպէս այդպիսին, կարծես թէ դադարում է այլևս գոյութիւն ունենալ, այսինքն ներքաղաքական վիճակը կարծես թէ վերստին վերադառնում է ելման կէտ՝ 2007 թուականի Սեպտեմբերի 20, սակայն այդ կեանքի իմիտացիա դիտուող ասուլիսների եւ կլոր սեղանների հիմնական թեման այժմ Ղարաբաղի հակամարտութիւնն է: Այդ առումով, ընդդիմութիւնը պնդում է, որ հակամարտութեան կարգաւորման գործընթացը մտել է վճռորոշ փուլ եւ միջազգային լուրջ ճնշում կայ Հայաստանի ոչ լեգիտիմ իշխանութեան վրայ, որ միակողմանի գիշման միջոցով լիւնի կարգաւորում, իսկ իշխանութիւնն էլ հաւաստիացնում է, որ ոչ ճնշում կայ, ոչ գիշում կայ եւ Ղարաբաղի հարցի կարգաւորումը հեռու է այնքան, որքան հեռու է այդ առիթով հասարակութեան կարծիքը, Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովրդի տեսակէտը, եւ եթէ այդ տեսակէտը չլինի, ոչ մի կարգաւորում էլ չի լինի:

Իշխանութեան այն պնդումն առաջին հայեացքից թւում է տրամաբանական, սակայն չէ որ մենք գիտենք, որ օրինակ Հայաստանի համար ոչ պակաս կարեւոր հարցերում, ինչպիսին օրինակ երկրի ղեկավարի ընտրութիւնն է, նոյն իշխանութիւնը շատ յաջող ձեւով գտնում է ժողովրդի կարծիքը շրջանցելու, արհամարհելու, հարկ

եղած դէպքում ժողովրդին պարզապէս սեփական կարծիքը բռնութեամբ պարտադրելու միջոցներ: Այնպէս որ, յատկապէս ժամանակակից տեխնոլոգիաների, քարոզչական մեխանիզմների, ինչպէս նաեւ ինտերիզները եւ սադրանքների միջոցով միշտ էլ հնարաւոր է կամ ստանալ ցանկալի կարծիք ժողովրդից, կամ էլ ծայրայեղ դէպքում շրջանցել այդ կարծիքը՝ պետական յեղաշրջման մեղադրանքով: Իսկ ժողովուրդը, թէ Հայաստանի, թէ Ղարաբաղի, ապրում են փաստացի տարբեր իրականութիւններում, բայց երկուսն էլ բաւական հեռու բուն իրականութիւնից: Ղարաբաղում թերեւս կտրուած լինելով ամէն ինչից՝ ստիպուած են կարգաւորման գործընթացի մասին դատել միայն ինտուիտիւ եւ ենթագիտակցօրէն, իսկ Հայաստանում էլ կարծես թէ կարգաւորման գործընթացի մասին դատում են գուտ հետաքրքրութիւնից դրդուած, եւ եթէ առաջարկուի անենք առաւել հետաքրքիր մի բան, ենթադրենք նոր մի քրէական պատմութիւն գեղարուեստական սցենարի ձեւով, ամենադիտուող հեռուստաժամին, ապա անկասկած հասարակութեան մի զգալի մասը կը գերադասի Ղարաբաղի մասին իմանալ յաջողօրոյ թերթերից, առաւել եւս, որ նոր բան փաստացի չեն էլ իմանում:

Սակայն, իշխանութեան խօսքից բացի, կարծես թէ այդքան էլ հաւաստի չէ ընդդիմութեան խօսքն այն մասին, որ կարգաւորումը մտել է վճռական փուլ, կայ աննա-

խաղէպ ճնշում Հայաստանի իշխանութեան վրայ, եւ անա ուր որ է կամ այդ իշխանութիւնը պէտք է տեղի կայ արտաքին ճնշմանը եւ յանձնի տարածքներն ու Ղարաբաղը, կամ էլ պէտք է ստիպուած լինի յանձնել իշխանութիւնը: Ընդ որում, երկու դէպքում էլ ընդդիմութիւնը կարծես թէ ակնկալում է, որ զարգացումը լինելու է ի նպաստ իրեն: Այն է, եթէ իշխանութիւնը յանձնի Ղարաբաղը, ապա ժողովուրդը արդէն նրան չի ների երբեք եւ միահամուռ դուրս կը գայ փողոց: Իսկ եթէ հասարակութիւնը միահամուռ դուրս գա փողոց, ապա իշխանութիւնը չի դիմանայ: Կամ, եթէ ժողովուրդն էլ փողոց դուրս չգայ, գերադասելով կարգալ յաջողօր օրոյ թերթերը, ապա իշխանութեան ներսում հնարաւոր կը լինի անել մօտաւորապէս այն, ինչ ներկայիս իշխանութիւնն արեց 1998 թուականին Յունուար-Փետրուարին: Դէն իսկ եթէ իշխանութիւնն էլ չյանձնի, ապա միջազգային ճնշողները հրաժարական կը պարտադրեն, եւ այդժամ կը գայ ընդդիմութեան ժամը: Գուցէ շատ աւելի պարզունակ եւ մակերեսային ներկայացուած, բայց մօտաւորապէս այդպիսին է ընդդիմութեան ակնկալիքը կամ մտածողութիւնն առկայ իրավիճակում: Այլ կերպ ասած, ընդդիմութիւնը քաշուել է մի կողմ եւ սպասում է իշխանութեան տապալմանը: Իսկ իշխանութիւնն այդ ընթացքում հանգում է կամուֆլյաժն ու ցուցադրական այց կատարում Ղարաբաղի եւ Հայաստանի սահմաններ:

Սովորաբար, Ռոբերդ Քոչարեանի ժամանակ, այդօրինակ ցուցադրական այցերի նպատակը լինում էր Հայաստանի անցիջում կեցուածքն ընդգծելը: Նոյն բանը թերեւս փորձեց անել Սերժ Սարգսեանը, իհարկէ հնարաւորինս դիւանագիտական ձեւակերպումներով, որ նա արեց Հանրային հեռուստատեսութեանը տուած իր քաղաքական հարցազրոյցի ընթացքում, ասելով, թէ պրոցէսը կը ձգուի դեռ երկար ժամանակ, հետեւաբար մօտալուտ կարգաւորման մասին խօսակցութիւնները չափազանցուած են: Ընդ որում, Սերժ Սարգսեանը կամուֆլյաժը հազաւ այն ժամանակ, երբ Ղարաբաղ էին եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Աւելին, նա Ղարաբաղ գնաց այն ժամանակ, երբ գրեթէ ամբողջ առաջադէմ հայութիւնն ինտերնետում մադրիդեան սկզբունքներ էր ման գալիս, Ադդամի փոխանակման տարբերակներ առաջարկում, Ադդամում տեղ նախապատրաստում ուս խաղաղապահների համար, կամ մտածում խաղաղապահներով մեր սահմաններն ամրապնդելու մասին: Սերժ Սարգսեանը այցելեց նոյնիսկ Ադդամի մօտ Տիգրանակերտի պեղումներին, այն Ադդամի մօտ, որը չի համարում մեր հայրենիքը: Այսինքն, Սերժ Սարգսեանը փորձում է իրավիճակից քաղել առաւելագոյնը եւ ցոյց տալ, որ այն ժամանակ, երբ բոլորը մտածում էին յանձնուելու մասին, ինքը քաջաբար եւ խոհեմաբար պահում է Ղարաբաղը, Ադդամը դարձնում է մեր հայրենիք: Այսինքն, երբ մէկն իր յաջողութիւնը սկսում է պայմանաւորել միւսի տապալումով, ապա միւսի համար չտապալուած ամէն մի օրն արդեն իսկ դառնում է մեծ յաջողութիւն:

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԼԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»

ՅԱՂՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐԸ

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզան իսկապէս անյարմար դրութեան մէջ է յայտնուել: Նախօրէին Բաքում յայտարարել է «թէ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ծրագիրը նախատեսում է հայկական զօրքերի դուրսբերումը գրաւեալ տարածքներից» որից յետոյ միայն պէտք է քննարկել հանրաքուէի միջոցով Ղարաբաղի կարգավիճակը որոշելու հարցը:

Այսինքն, ըստ Մեթիւ Բրայզայի, նախ հայկական զօրքերը պիտի դուրս բերուեն գրաւեալ տարածքներից, եւ միայն դրանից յետոյ պիտի քննարկուի՝ արդեօ՞ք պէտք է Ղարաբաղում հանրաքուէ անցկացնել, թէ ոչ: Մեթիւ Բրայզան, իհարկէ, սարից չի իջել եւ գիտակցում է, որ իր այս յայտարարութիւնները պիտի որ մեծ աղմուկ առաջացնեն Հայաստանում: Հետեւաբար՝ խնդիրն այս պահին այն չէ, թէ ինչու է Մինսկի խմբի ամերիկեան ներկայացուցիչն այսպիսի «հակահայկական» տեսակէտներ ներկայացնում: Խնդիրն այն է, թէ ինչի՞ համար է դա արւում: Այսինքն, Մեթիւ Բրայզայի ինչի՞ն է պէտք, որ Հայաստանում բողոքի այլք բարձրանայ, եւ քաղաքական ուժերը հայհոյեն Սերժ Սարգսեանին:

Այս ամէնն իսկապէս շատ բարդ է: Որ Սերժ Սարգսեանն ընդհանրապէս թքած ունի Ղարաբաղի ու դարաբաղեան խնդրի վրայ՝ դա բոլորն են հասկանում: Բայց վախը կարեւոր գործօն է, եւ զարմանալի չէ, որ Սերժ Սարգսեանն անսպասելիօրէն որոշել է այցելել Ղարաբաղ: Երեւի մտադիր

է եւս մի անգամ հաւաստիացնել, որ այս ամէնն ընդամէնը դիւանագիտական խաղեր են, եւ իրականում հայկական կողմը որեւէ գիշում չի անելու: Մէկ էլ տեսար՝ հաւատացին:

Բայց միայն իշխանական թեւում չէ, որ ամէն ինչ անհասկանալի է: Երէկ «Միացում» շարժումը փորձել է էջմիածին քաղաքում միջոցառում կազմակերպել եւ հասարակութեանը բացատրել, թէ որքան ճակատագրական կարող է լինել ազատագրուած տարածքների յանձնումը: Ընդ որում, միջոցառման կազմակերպիչներից մէկն էլ եղել է ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ, պատգամաւոր Ջարուհի Փոստանջեանը, որն աւելի ուշ յայտարարել է, թէ իրենց նպատակն է՝ մարդկանց բացատրել, թէ շատ կարեւոր է փակել «ազատագրուած հայրենի տարածքների յանձնման առանցքի շուրջ ձեւաւորուած աւելի քան 15-ամեայ ամօթալի պարտուողական դիւանագիտութեան էջը» դիւանագիտութիւն եւ գուզահեռընթացող ներքին քարոզչութիւն, որոնց նպատակներից մէկը եղել է վճռական պահին մեր ժողովրդին հոգեբանօրէն նախապատրաստել լուռ համակերպման»: Նկատենք, որ Ջարուհի Փոստանջեանն իսկապէս քաջ է: Միայն մի հարց՝ ինչպէ՞ս կարելի է խօսել «աւելի քան 15-ամեայ պարտուողականութեան» մասին եւ դրանով իսկ մեղադրել նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանին, եթէ «աւելի քան 15 տարի առաջ» (այսինքն՝ 1993-ին) դարաբաղեան ճակատում հայկական կողմը դեռեւս չէր տօնել

յաղթանակները, հետեւաբար՝ չէր էլ կարող ազատագրուած տարածքների «յանձնմանն» ուղղուած քարոզչութիւն իրականացնել: Եւ ընդհանրապէս, վերջին օրերին հայրենասիրութեան այսօրինակ ինքնաբուխ պոռթկումները յաճախակի են դարձել: Ընդ որում, իւրաքանչիւր ինքնաբուխ «հայրենասէր» իր պարտքն է համարում «ձեռքի հետ» կասկածի տակ առնել նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի գործունէութիւնը՝ երեւի յոյս ունենալով, թէ դրա շնորհիւ իշխանութիւնների կողմից պատշաճ ուշադրութեան կ'արժանանայ: Բան չունենք ասելու. մէկ էլ տեսար՝ իսկապէս արժանացան: Սերժ Սարգսեանի վիճակը հիմա այնպիսին է, որ մեծ հաճոյքով նաեւ փրփուրները կը կառչի:

Բայց իրողութիւնն այն է, որ էջմիածին քաղաքապետ Կարէն Գրիգորեանը դահլիճ չի տրամադրել «Միացում» շարժմանը: Պարզ ասած, գեներալ Մանուէլի որդին դահլիճ չի տրամադրել այն կազմակերպութեանը, որն իբր պիտի միջոցառում կազմակերպէր ի պաշտպանութիւն այն տարածքների, որոնց ազատագրողներից մէկն էլ գեներալ Մանուէլն է եղել: Առաջին հայեացքից՝ իսկապէս արտուրդ է: Բայց միւս կողմից էլ՝ ամէն ինչ հասկանալի է: Գեներալ Մանուէլը մեր տասնեակ հազարաւոր քաղաքացիների հետ միասին տարածքներ է ազատագրել սրանից 14-15 տարի առաջ, եւ եթէ այսօր այդ մարդիկ յայտարարում են «աւելի քան 15-ամեայ պարտուո-

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԳԵՄՈՂԿՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՉԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՍՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳԱԻԹԵԱՆ  
Յեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



ՐԱՅԱՍԱՆ

ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ.

«ԵԹԷ ՅՈՂ ԵՆ ՈՒԶՈՒՄ, ԹՈՂ ՄԵՐ ՅՈՂԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵՆ ԴՐԱ ԴԻՄԱՅ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Դիւանագիտական դաշտում լիարժէք պարտութիւն», - այսպէս բնութագրեց ԼՂՀ խնդրի կարգաւորման շուրջ տեղի ունեցած վերջին զարգացումները, յատկապէս Մոսկովեան յուշագիրը ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Վահան Շիրխանեանը:



Վահան Շիրխանեան ասուլիսի ընթացքին

Նա նկատեց, որ թէեւ հայկական կողմը շահել էր պատերազմը եւ պէտք է անցնէր ակտիւ դիւանագիտական աշխատանքի, Ադրբեջանը թուրքիայի հետ աշխատեց եւ Հայաստանին կարողացաւ պարտութեան մատնել ինֆորմացիոն պատերազմի դաշտում:

«Այն ժամանակ, երբ մեր իշխանաւորները դղեակներ էին կառուցում, կազինոներ էին այցելում, նրանք ինֆորմացիոն պատերազմ էին տանում Հայաստանի դէմ եւ յաղթեցին»:

Նրա ընդդիմախօս ՀՀԿ խորհրդի անդամ Արմէն Աշոտեանը համաձայնեց, որ ինֆորմացիոն պատերազմում ՀՀ-ն պարտուել է, բայց պատճառը Հայաստանի դեմոկրատական լինելն է: Ըստ Աշոտեանի՝ ՀՀ-ն ունի ընդդիմութիւն եւ մամուլ, որի միջոցով աշխարհն իմանում է ներքին անցուղարձը. նա չի շնորհակալում մարտեան դէպքերը:

Իսկ դիւանագիտական դաշտում յաղթելու համար, ըստ Արմէն Աշոտեանի, մեզ անհրաժեշտ է քաղաքական կոնսենսուս, քաղաքական ուժերի համերաշխութիւն: Աշոտեանը, բարձր գնահատելով հռչակագիրը այն առումով, որ առաջին անգամ Ադրբեջանը ստորագրել է խաղաղ, քաղաքական ճանապարհով խնդրի լուծումը ենթադրող փաստաթղթի տակ, այնուհանդերձ իշխանութիւնները, որ եղել են Հայաստանում Ղարաբաղեան խնդրի յաջորդաբար ներկայացնողներն են, այդ խնդիրը փոխանցուել է ժառանգաբար եւ իշխանութիւններն իրենց տարբեր մօտեցումների մէջ, թէ առաջին նախագահը, թէ երկրորդը, եւ թէ երրորդը շարունակում է Ղարաբաղեան հիմնախնդրի լուծումը, ոչ թէ սկսում է գրոցից. սա շատ կարեւոր ներութիւն է», - ասաց Աշոտեանը, ապա, ի պատասխան Շիրխանեանի՝ ՄԱԿ-ի, ԵՆԽՎ ոչ

հայնպատ բանաձեւերի չի շնորհակալում, պատասխանեց, որ 91-94 թուականներին ՄԱԿ-ը շատ աւելի վատ բանաձեւեր է ընդունել:

Խօսքը հասաւ նաեւ 1998 թուականին առաջարկուած լուծման տարբերակին, եւ Վահան Շիրխանեանը հաւաստեց, որ այն շատ աւելի լաւն էր, քան այսօրուայ առաջարկները, քանի որ խօսքը գնում էր ոչ թէ Լաչինի միջանցքի, այլ Լաչինի շրջանի մասին, նաեւ Արծուաշէնի, իսկ այսօր, ըստ Շիրխանեանի, խօսուում է Լաչինի միայն փոքր միջանցքի, հայկական գինուժի դուրսբերման, ադրբեջանցի փախստականների վերադարձի մասին, իսկ հայկական հողերի՝ Շահումեանի, Արծուաշէնի եւ միւս բնակավայրերի մասին խօսք չկայ:

Շիրխանեանը չի շնորհակալում, որ 54 հայկական զիւղ այսօր գտնուում է Ադրբեջանի տարածքում. «Եթէ հող են ուզում, թող մեր հողերը վերադարձնեն դրա դիմաց», - ասաց Շիրխանեանը:

Աշոտեանը կիսում է այս դիրքորոշումը, սակայն նաեւ աւելացնում, որ դա միայն կարեւոր տարրերից մէկն է, բայց հող փոխանակելով՝ կարգավիճակի հարցը չի լուծուի: Իսկ ռեպլիկի կարգով էլ հանրապետական պատգամաւորը նկատեց. «Եթէ այդքան լաւն էր 98-ի տարբերակը, ինչո՞ւ էիք դուք Սպարապետի կողքին»:

Շիրխանեանը չի շնորհակալում, որ նա Սպարապետի կողքին եղել է 88-ից, այնպէս ինչպէս Սպարապետը 88-ից եղել է Լեւոն Տէր-Պետրոսեանի կողքին, մինչեւ Ռոբերտ Քոչարեանը Ղարաբաղից եկաւ եւ իշխանութեան մէջ առաջացաւ պառակտում:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԼՐԱԳՐՈՂԻ ՎՐԱՅ. ԷԴԻԿ ԲԱՂՂԱՍՐԵԱՆԸ ՎԻՐԱՒՈՐՈՒԵԼ Է

«Հետաքննող լրագրողներ» հկ նախագահ, «Հետք» էլեկտրոնային պարբերականի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարեանի վրայ երկուշաբթի, Նոյեմբեր 17-ի երեկոյան յարձակում է կատարուել: Լրատուամիջոցի ղեկավարը աշխատանքային օրուայ աւարտից յետոյ Բուզանդի 1/3 հասցէի իրենց գրասենեակից դուրս է եկել, մօտեցել մեքենային եւ այդ ժամանակ նրա վրայ յարձակուել են երեք անձինք:



Լրագրող Էդիկ Բաղդասարեան արիւնլուա վիճակի մէջ

Յարձակում գործածները ծեծել են Բաղդասարեանին այնքան, որ գլխից սկսել է առատ արիւն հոսել: Արնաշաղախ ու կիսամերկ Բաղդասարեանին շտապօգնութեան աշխատակիցները տեղափոխել են Գրիգոր Լուսաւորիչ բժշկական կենտրոն: Սբ. Գրիգոր Լուսաւորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի աւագ հերթապահ Էդուարդ Պետրոսեանը «Հետք»-ի խմբագիր Էդիկ Բաղդասարեանի վիճակը բաւարար է եւ նրա կեանքին սպառնացող վտանգ չկայ: Ըստ նրա, Բաղդասարեանը

վերքեր է ստացել գլխի գազաթաշին եւ ծոծրակային շրջանում:

Դատախազութիւնը ահագանգը ստացել է հենց նրանից 19:55-ի սահմաններում: Դէպքի հետ կապուած՝ քննիչներ են աշխատում, հարցաքննուում են նաեւ ընտանիքի անդամները:

«ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»՝ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՄՏԱՅՈՒԹԻՒՆ Ե ՅԱՐՈՒՑԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Արդարադատութեան նախարարութեան կողմից մշակուել է «Տեղեկութիւն ստանալու ազատութեան մասին» օրէնքի նախագիծը, որը ընդունուելու դէպքում կը փոխարինի «Տեղեկատուութեան ազատութեան մասին» օրէնքին: Մի շարք հասարակական կազմակերպութիւններ մտահոգութիւն են յայտնում, որ առաջարկուող օրինագծի ընդունման դէպքում զգալի հետընթաց կը գրանցուի տեղեկատուութեան ազատութեան ոլորտում:

դրանք: Արդարադատութեան նախարարութեան աշխատակազմի իրաւական ակտերի փորձաքննութեան վարչութեան պետաիրաւական բաժնի պետ Արտակ Գէորգեանի հաւաստմամբ՝ նոր օրէնքի նախագիծը ներկայացնելու հիմնական պատճառը այդ խնդիրն է եղել:

Գործող օրէնքի հիման վրայ արդեն կան 35 դատական որոշումներ, որոնց 80 տոկոսից աւելին եղել է մարդու՝ տեղեկատուութիւն ստանալու խախտուած իրաւունքը վերականգնելու օգտին, տեղեկացում է ինֆորմացիայի ազատութեան կենտրոնը: Ըստ կենտրոնի տարածած տեղեկանքի, նոր օրէնքի նախագիծը մի շարք լուրջ բացթողումներ է պարունակում: Մասնաւորապէս, գործող օրէնքը պաշտպանութեան տակ է առնում վիճելի դէպքերում տեղեկատուութեան արտահոսք թոյլ տուած պաշտօնեաներին, մինչդեռ նոր օրէնքի նախագիծը նման բան չի նախատեսում: Բացի այդ, ըստ ինֆորմացիայի ազատութեան կենտրոնի հանրային կապերի պատասխանատու Անահիտ Քոչարեանի, նոր օրինագիծով աւելացուում են տեղեկատուութեան սահմանափակման հարաւորութիւնները. գործող օրէնքով սահմանուած 5 խումբ գաղտնիքների ցանկի փոխարէն նոր օրէնքի նախագիծում արդեն 15 խումբ է ներառուած:

«Շատ լրագրողական կազմակերպութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ համարում են, որ այս [«Տեղեկատուութեան ազատութեան մասին»] օրէնքը ունի բարեփոխելու կարիք, բայց դրա հետ մեկտեղ ընդգծում են, որ նոր օրէնքի անհրաժեշտութիւն չկայ, որովհետեւ դա մեր լաւագոյն օրէնքներից մէկն է, բաւական լաւ գործում է», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեանը:

Գործող օրէնքը չունի համապատասխան ենթաօրէնարկական ակտեր, որոնցով հնարաւոր լինի ապահովել օրէնքի լիակատար իրագործումը: Կառավարութիւնը, որը պէտք է ընդունել այդ ակտերը օրէնքի ուժի մէջ մտնելուց՝ 2003 թուականից ի վեր, չի ընդունել

«ՁԱՅՆԵՐԴ ԳԼՈՒԽՆԵՐԴ ՄԻ ԳՑԷՔ»

«Մեր համբերութեան բաժակն արդէն լցուել է, պահանջում ենք, որ նախագահը անձամբ դուրս գայ եւ մեզ լսի», - աղաղակում էին ՀՀ նախագահի նստավայրի դիմաց հաւաքուած իրացման զօրու բնակիչները: Յոյցին ներկայ «Սեփականութեան իրաւունքի պաշտպանութիւն» հ/կ-ի նախագահ Վաչագան Յակոբեանը «Առաւօտին» տեղեկացրեց, որ իրենց զանգել է նախագահի աշխատակազմի ղեկավար Կարէն Կարապետեանը եւ ասել, որ նախագահականից իրենց կ'ընդունեն. «Սակայն մեզ ուղեկցեցին նամակների բաժին, որտեղ էլ միայն հեռախօսով խօսեցինք վերահսկողութեան վարչութեան պետ Յովհաննէս Յովսէփեանի հետ: Նա մեզ ասաց, որ նախագահի մօտ հիւրեր կան եւ իզուր ենք շէնքի առջեւ ձայներս պլուխներս օգնել»: Ըստ Վ. Յակոբեանի, պարոն Յովսէփեանը նրանց սպառնացել է ոստիկանութեան միջամտութեամբ ցրել հաւաքուածներին:

ՊՂԾՈՒԵԼ ԵՆ ՅԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՁՄԱՆՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Կիրակի՝ Հանդուր-ժողովեան միջազգային օրը, Թբիլիսիում պղծուել են քաղաքի երկու հայ մեկենասների՝ Թամաշեանի ընտանիքի ներկայացուցիչներ Միխայիլի եւ Լիդիայի գերեզմանները: Նրանք յուղարկուորուել են մօտ 100 տարի առաջ Նորաշէն եկեղեցու պատերի տակ:



Մտահոգ վրացահայեր կը փորձեն շտկել պղծուած գերեզմանաքարերը

Ըստ վրաստանի հայկական համագործակցութեան կենտրոնի հարորդագրութեան, պղծումը տեղի է ունեցել վրացի հոգեւորական Տարիել Միկինչեւաշվիլիի գլխավորութեամբ, որն, իր իսկ խօսքերով, էկսկավատորով տեղաշարժել է շիրմաքարերը՝ դրանց տակը եւ շուրջը մաքրելու համար:

Վրաստանի հայկական համագործակցութեան կենտրոնը տեղի ունեցածը որակում է որպէս վրաստանում հայկական պատմական եւ մշակութային ժառանգութեան վերացման հերթական փաստ:

**ԼՈՒԵՐ**

**«ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ ԾԵՂՔԵԼՈՒ ԱՆՅԱԶՈՂ ՓՈՐՁ Է ԱՐԵԼ»**

**«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:** Նոյեմբերի լոյս 16-ի գիշերը Ադրբեջանի զինուած ուժերի յատուկ շտաբի ղեկավար Զոհրաթ Լեռնալին Ղարաբաղի զինուած ուժերի դիրքերի հարաւարեւելեան ուղղութեամբ փորձել է ճեղքել Ղարաբաղի պաշտպանութեան բանակի թիկունքը, սակայն զարաբաղցի զինծառայողները ճեղքարկած գործողութիւնները արդիւնքում ետ է մղուել նախկին դիրքեր՝ տալով առնուազն մէկ զոհ: Այդ մասին ասուած է Ղարաբաղի արտգործնախարարութեան այսօրուայ յայտարարութիւնում:

Ղարաբաղի արտգործնախարարութիւնը յատկապէս շեշտում է այն հանգամանքը, որ միջադէպը տեղի է ունեցել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ ԱնՉէյլ Կասպրաչիկի ղարաբաղեան այցի ընթացքում, այն բանից յետոյ, երբ

Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահները Մոսկուայում հռչակագիր ստորագրեցին հակամարտութեան քաղաքական լուծում որոնելու մասին:

Նշելով, որ միջադէպը այս տարուայ ընթացքում հրադադարի գոտում ադրբեջանական կողմի նախաձեռնած առաջին յարձակումը է, Ղարաբաղի արտգործնախարարութիւնը հերթական անգամ միջնորդները եւ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել է խաղաղ կարգաւորման անխուսափելիութեան, հրադադարի ռեժիմի ամրապնդման անհրաժեշտութեան վրայ, եւ միջադէպի ամբողջ պատասխանատուութիւնը դրել է Ադրբեջանի ղեկավարութեան վրայ:

Ղարաբաղի ղեկավարութեան պաշտօնական տեսակէտն արտայայտող համապատասխան նոտա է յղուել ԵԱՀԿ-ի գործող նախագահին եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչին:

**ՍՄԲԱՏ ԱՅՎԱԶԵԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒԱՅ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ**

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանը Նոյեմբեր 19-ին երկու տարուայ ազատագրկման դատապարտեց «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքական խորհրդի անդամ, պետեկամուտների նախկին նախարար Սմբատ Այվազեանին՝ սահմանելով նաեւ 300 հազար դրամ տուգանք:

Դատարանը ապացուցուած եւ հիմնաւորուած ճանաչեց նրան առաջադրուած՝ ապօրինի զէնք պահելու եւ իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու մեղադրանքները:

Սմբատ Այվազեանը անազատութեան մէջ է փետրուարի վերջից՝ յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ:

**ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԴԵՄ ՎԵՐՁԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ**

**Շարունակուած էջ 1-էն**

նի մէջ լրագրողներու դէմ բռնութիւններու նախապէս տեղի ունեցած դէպքերուն, որոնց շարքին՝ «Հայկական ժամանակ» թերթի լրագրող Լուսինէ Բարսեղեանի եւ «Ազատութիւն» ռատիոկայանի երեւանեան գրասենեակի տնօրէնի պաշտօնակատար Հրաչ Մեղքումեանի դէմ յարձակումներուն՝ ընդգծելով, որ այդ դէպքերը առայժմ բացայայտուած չեն:

«Նման յանցագործութիւններու նպատակը երկրէն ներս լրատուական ոլորտի աշխատակիցներուն ահաբեկելն ու հետաքննական լրագրութեան խոչընդոտելն է: Այս միջադէպերու բացայայտման աշխատանքներուն մէջ յատկապէս լրագրողներու դէմ հետազոյ բռնութիւններու առիթ հանդիսանալ», - ըսած է Հարաչտի, շեշտելով լրագրողներու դէմ յարձակումներու բոլոր դէպքերը արագ բացայայտելու եւ մեղաւորներուն պատասխանատուութեան ենթարկելու անհրաժեշտութիւնը:

**ՊՈԼՍՈՅ ԺԱՄԱՆԱԿ ԹԵՐԹԸ**

**Շարունակուած էջ 1-էն**

Թուրքիոյ ոչ-մահմետականները հալածանքներու կ'ենթարկուէին:

Այսօր թերթի տպաքանակը կը տատանի 1500-2000 օրինակի սահմաններուն մէջ: Խմբագրական կազմի 8 աշխատակիցները 4 էջի սահմաններուն մէջ ընթերցողներուն կը մատուցեն լայն տեղեկա-

տուութիւն՝ հայ համայնքի կեանքի, ինչպէս նաեւ տեղական եւ միջազգային իրադարձութիւններու վերաբերելով:

Թուրքիոյ հայ համայնքի եւ հայկական մամուլի հետ կապուած՝ «Ֆրանսփրէս»-ը չի շեցնէ նաեւ Պոլսոյ «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութիւնը՝ թուրք ազգայնամոլի կողմէ:

**ՅԱՂԹՈՂՆԵՐԻ ԾԱՆԱՊԱՐՅՈՒ**

**Շարունակուած էջ 1-էն**

ղական քաղաքականութեան» մասին «ուրեմն՝ կասկածի տակ են առնում ոչ միայն այն ժամանակուայ գերագոյն-գլխաւոր հրամանատար Լեւոն Տէր-Պետրոսեանի, այլև նրա լաւագոյն գեներալ Մանուէլ Գրիգորեանի յաղթանակը: Թէեւ, միւս կողմից էլ, էջմիածնում նման բան թոյլ տալ չէր կարելի: Քաղաքապետի «մոտիվները» հասկանալի են, բա ուրիշ որտե՞ղ պիտի վերջապէս ազատօ-

րէն խօսենք մեզ յուզող հարցերի մասին, եթէ ոչ էջմիածնում:

Ամէն դէպքում, այս թեմայով հասարակութեան ակտիվացումը նոր միայն սկսուած է: Եւ չարժէ, որ պատերազմում յաղթողները ելնեն իրենց հրամանատարների դէմ: Աւելի լաւ է՝ մի կողմ դնեն տարածայնութիւնները, միանան եւ ելնեն յաղթանակը վաճառքի հանողների դէմ: Եւ հաւատարմեցէ՛ք յաղթանակը կը կրկնուի: Սա է ճանապարհը:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**  
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

**ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐՈՒ**

**Շարունակուած էջ 1-էն**

ղաղութեան համաձայնագրի յատակ յղուածներուն միջեւ տարբերութիւնը պէտք է հասկնալի ըլլայ: Այնպէս որ, այդ ոչ թէ 2-3 շաբաթ, ոչ թէ 2-3 ամիս, այլ աւելի երկարատեւ ժամանակահատուած կը պահանջէ:

Այն հարցին՝ թէ արդեօք համանախագահները չե՞ն կարծեր, որ առանց Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը ամրագրելու կարելի չէ որեւէ լուծման հասնել, եւ եթէ կը խօսուի 5 շրջաններէ հայկական գործերը դուրս բերելու մասին, ապա արդեօք այդ պարագային կը քննարկուի Շահումեանէն եւ Արծուաշէնէն ադրբեջանական գործերու հեռացման հարցը, Եուրի Մերգլեակով պատասխանեց, որ «առաջին հերթին պէտք է հասկնալ, թէ ո՞ր Ղարաբաղի անկախութեան մասին է խօսքը՝ ա՞յն, որ կը գտնուէր խորհրդային Ատրպէյճանի կազմին մէջ, թէ՞ այն Ղարաբաղի, որ իրեն հռչակեց 1991 թուականին, կամ դեռեւս ներկայիս Ղարաբաղի»:

- «Եթէ խօսքը ներկայիս Ղարաբաղի մասին է, ապա պէտք է խօսիլ Շահումեանի մասին, իսկ եթէ կ'ըսենք՝ եկէք խօսինք անկախութեան մասին, գումարած՝ Աղղամի, Մարտունու, Մարտակերտի, Ֆիզուլիի եւ միւս շրջաններու, ապա, կը կարծեմ, պէտք է իրատես ըլլալ»:

Ինչ կը վերաբերի բուն տարածքներու վերադարձի ինդիքին, ապա Մերգլեակով ըսաւ, թէ անոնք պարզօրէն պիտի չվերադարձուին, քանի որ այդ տարածքները ներկայիս էական դեր կը խաղան Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութեան ապահովման առումով:

Միւս կողմէ, Հայաստանի Հանրային հեռատեսիլէն իր ունեցած հարցազրոյցի ընթացքին Սերժ Սարգսեան ըսած է, որ Լեւոնային Ղարաբաղի ինդիքը կրնայ լուծուիլ, եթէ Լեւոնային Ղարաբաղի ժողովուրդը կարողանայ իրականացնել իր ինքնորոշման իրաւունքը: «Աւելի ճիշդ, աւելի ստույգ ասեմ՝ եթէ Ատրպէյճանը ընդունի Լեւոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրացման հնարաւորութիւնը», - աւելցուցած է ան:

Երկրորդ պայմանը, ըստ Սերժ Սարգսեանի, Լեւոնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ցամաքային սահմանն է եւ Լեւոնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութեան հարց երաշխիքները:

«Շատ կար խնդիր է, եւ միայն խելակորոյց մարդը կարող է այս ձեւակերպումների մէջ գտնել միայն գիշումներ», - ըսած է Սերժ Սարգսեան՝ հերքելով հնչող տեսակէտները, թէ հայկական կողմը միակողմանի գիշումներու կը դիմէ: - «Ուղղակի Հայաստանում որոշ քաղաքական ուժերի եւ նաեւ գործիչների թւում է, թէ ընտրութիւնները չեն աւարտուել, եւ ցանկացած առիթ օգտագործում են շահարկումների համար: Բժախնդրութեամբ ուսումնասիրում են թուրք-ատրպէյճանական մամուլը, վերլուծութիւններ, կանխատեսումներ են կատարում, եզրայանգումներ անում, եւ այս ճանապարհին նրանց բոլորովին չի հետաքրքրում ոչ Հայաստանի, եւ ոչ էլ Լեւոնային Ղարաբաղի պաշտօնական տեսակէտները, եւ նոյնիսկ այդ նոյն թուրք-ատրպէյճանական մամուլում հնչող հերքումները»:

Միւս կողմէ, Սարգսեան հրա-

ւէր յղած է հայաստանեան մօտ 70 կուսակցութիւններու, Նոյեմբեր 20-ին ներկայ գտնուելու եւ միասին քննարկելու համար զարաբաղեան հարցի վերջին զարգացումները:

Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան հաստատել է ետք որ, ընդգիծադիր համախմբումին մաս կազմող կուսակցութիւնները նման հրաւեր ստացած են, լրագրողներուն յայտնած է թէ, իւրաքանչիւր կուսակցութիւն ազատ է իր առանձին որոշումը կայացնելու՝ հրաւերին ընդառաջելու, կամ՝ ոչ:

Ինչ կը վերաբերի Գոնկրէսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, ան Սերժ Սարգսեանէն հրաւեր չէ ստացած, քանի որ որեւէ կուսակցութեան ղեկավար չէ:

Գոնկրէսին մաս կազմող «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, որ նախագահի հրաւերը ստացած է, սակայն պիտի չընդունի: «Այսօրուայ տէ-ֆակտօ պետութեան ղեկավար Սերժ Սարգսեանը, իր ենթակայ դատախազութեան հետ միասին, ինձ մեղադրում է պետական յեղաշրջման, իշխանութիւնը բռնազաւթելու փորձի մէջ, եւ փորձում է նաեւ իմ կարծիքն իմանալ Ղարաբաղի հիմնահարցի լուծման առումով: Եթէ ես պետական յեղաշրջում անող մարդ եմ, ուրեմն՝ իմ կարծիքն իմանալ պէտք է: Հրաւերը համարում եմ ոչ կողակտ եւ իմ մասնակցութիւնը համարում եմ անիմաստ», - ըսած է ան:

Հրաւերը մերժելու մասին արտայայտուած է նաեւ Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան: Նայն ռատիոկայանին ան ըսած է թէ՛ իշխանութիւններու կողմէ յատակ խնդիր դրուած է միջազգային կառուցներուն ցոյց տալ, որ երկրէն ներս ամէն ինչ նորմալ է: «Բացի այդ, իշխանութիւնները փորձում են հետազոյում իրենց կայացրած որոշումների պատասխանատուութիւնը նաեւ ընդգիծութեան վրայ բարդել», - ըսած է ընկերուհի Սարգսեան:

Հայաստանի ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեան տեղեկացուցած է, որ իր մասնակցութեան հարցը տակաւին չէ որոշուած:

Հայ Ազգային Գոնկրէսը Նոյեմբեր 18-ին տարածած է յայտարարութիւն մը, ուր համոզմունք կը յայտնէ, որ զարաբաղեան ինդիքի կարգաւորման գործընթացին մէջ երկրի դիրքերը բարելաւելու համար Հայաստանի իշխանութիւնները պէտք է անչապաղ 4 քայլ իրականացնեն: «Կարճել անազատութեան մէջ գտնուող բոլոր 75 քաղաքատարկեայների նկատմամբ յարուցուած շինծու գործերը, դադարեցնել այն գործողութիւնները, որոնք խոչընդոտում են Մարտի 1-ի իրադարձութիւններն ուսումնասիրելու նպատակով ստեղծուած փաստահաւաք խմբի բնականոն աշխատանքներին, դադարեցնել քաղաքական հողի վրայ տնտեսական եւ վարչական հետապնդումները, անմիջապէս գործուն քայլեր ձեռնարկել համաշխարհային ֆինանսական ու տնտեսական ճգնաժամի անխուսափելի հետեւանական ճգնաժամի անխուսափելի հետեւանական ճգնաժամի շահարկումների պաշտպանելու համար», ըսուած է Գոնկրէսի յայտարարութեան մէջ:



ԱԶԳԱՅԻՆ

«ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԵՐԲԵՔ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՉԻ ՈՒՆԵՆԱՅ, ՈՐ ԱՐՑԱԽԸ ԴԱՌՆԱՅ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԿՈՂՄ»  
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՅԿ ԱՏԵՆԱՊԵՏ ԼԻԴԻՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ

ԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ  
ԱՐՄԱՆ ԳԱՆՈՅՆԱՆԸ

- Մէկ ամիս առաջ ընդդիմութիւնը, պատճառաբանելով ԼՂ խնդրում ստեղծուած վիճակը, յայտարարեց հանրաւարքները երկու ամսով ժամանակաւորապէս դադարեցնելու մասին: Չեր կարծիքով, որ քանո՞վ էր արդարացուած այս որոշումը:

- Բոլոր նրանք, ովքեր սկզբում կասկածում էին այս որոշման արդարացիութեանը, այսօր միանշանակ համոզուած են, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը շատ ճիշտ քայլ արեց: Քայլ, որ յատուկ է պետական մտածելակերպ ունեցող գործիչներին: Տէր-Պետրոսեանն այդպէս ապացուցեց, որ ինքը մարդ է, որ չի առաջնորդում զուտ իշխանափոխութեան գաղափարով, այլ մտածում է երկրի ապագայի մասին, նրան յուզում է ԼՂ հիմնահարցը: Նա մարդ է, որ կարող է ճակատագրական պահերին ճիշտ, պատասխանատու որոշում կայացնել: Իր ելույթում Տէր-Պետրոսեանը շատ յստակ Սերժ Սարգսեանին յուշում էր, թէ ինչ կարելի է անել, որ ԼՂ խնդրի լուծումը չտարուի փակուղի: Նա հնարաւորութիւն տուեց Սերժ Սարգսեանին առաւելագոյնս իմաստուն քայլեր կատարել, որ ԼՂ խնդիրը փակուղի չմտնի, որ ՀՀ-ի ու ԼՂՀ-ի համար նպաստաւոր լուծուի:

- Եւ որքանո՞վ Սերժ Սարգսեանը կարողացաւ օգտուել այդ հնարաւորութիւնից:

- Մի բան է հնարաւորութիւն տալը, մէկ այլ բան՝ այդ հնարաւորութիւնն օգտագործելը: Դժբախտաբար Սերժ Սարգսեանը կամ չէր կարող, կամ չէր ուզում օգտագործել այդ հնարաւորութիւնը: Վերջին տասը տարիներին Ռոբերտ Քոչարեանի ջանքերով ստեղծուեց մի իրավիճակ, որ ԼՂ հիմնահարցի լուծումն իրօք, փակուղի մտաւ: Եւ այն ձեռքբերումները, որ ունէինք 1998 թ., երբ Արցախը բանակցային կողմ էր, կորցրինք: Սերժ Սարգսեանը կարող էր բանակցութիւնների ժամանակ ասել, որ ինքը լիազօրուած է Արցախի ժողովրդի կողմից այդ խնդիրը լուծել: Բայց նա չարեց: Ոչ ոք լիազօրուած չէ Արցախի ժողովրդի անունից լուծելու այդ հարցը: Արցախի հարցը պէտք է լուծի Արցախի ժողովուրդը: Իսկ դրա համար հարկաւոր է, որ Արցախը վերադառնայ բանակցային սեղա-



նին: Այնպէս որ այն ինչ կատարուած է այսօր, ոտնահարում է Արցախի ժողովրդի իրաւունքները:

- Սերժ Սարգսեանը Հանրային հեռուստարձկերութեանը տուած հարցազրոյցում յայտարարեց, թէ ինքն էլ կ'ուզի, որ ԼՂ-ն բանակցային կողմ դառնայ: Ուրեմն՝ նա ազնիւ չէ՞ր իր պնդումներում:

- Սերժ Սարգսեանը դեռ նախագահի ընտրութիւններից առաջ արտաքին աշխարհի հետ պայմանաւորուել էր նրանց ուզած ձեւով լուծել Արցախի հարցը: Եթէ չլինէր այդ պայմանաւորութիւնը, նա այդպէս հեշտութեամբ չէր մարտի երկրում ստեղծուած իրավիճակը, Մարտի 1-ը, քաղբանտարկեալների առկայութիւնը, բռնութիւնները, մարդու իրաւունքների ոտնահարումները: Նրա առաջ խնդիր է դրուած՝ ամէն գնով շուտափոյթ կերպով լուծել Արցախի խնդիրը: Ուստի առանձնապէս դժուար չէ ենթադրել, որ Սերժ Սարգսեանը ամենեւին էլ ազնիւ չէ իր խօսքերի մէջ: Նա երբեք ցանկութիւն չի ունեցել եւ երբեք ցանկութիւն չի ունենայ, որ Արցախը դառնայ բանակցային կողմ, որովհետեւ այդ դէպքում արդէն խաղի կանոնները փոխուած են, ու նա արտաքին աշխարհի առջեւ այլեւս չի կարողանայ իր խօսքերի տէրը լինել: Իսկ արտաքին աշխարհին այսօր ձեռնտու է, որ Սերժ Սարգսեանը ստորագրի այն փաստաթուղթը, որ կը ներկայացուի նրան: Այլապէս, նրանք գործի կը դնեն շանտաժի միջոցները, իսկ ոչ լեզուի մարդուն միշտ էլ կարելի է պարտադրել:

- Իշխանութիւնները միշտ խօսում են փոխզիջումների մասին, խօսում են, որ առանց ԼՂ կողմի համաձայնութեան իրենք ոչ մի փաստաթուղթ չեն ստորագրի:

- Ի՞նչ փոխզիջումների մա-

սին է խօսքը, երբ Մեթիու Բրայզան յայտարարեց, թէ իրենք վստահ են, որ Ատրպէյճանի զրաւեալ տարածքները կը վերադարձուեն, կը վերականգնուի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, որից յետոյ նոր կը խօսուի հանրաքուէի մասին: Իսկ ինչ վերաբերում է հանրաքուէին, ապա մատրիտեան սկզբունքներում նշուած է, որ ԼՂ-ում եւ զրաւեալ տարածքներում չի թոյլտարուում ոչ մի վերաբնակեցում, չի թոյլտարուում ՀՀ-ի կողմից ոչ մի շինարարութիւն: Նախատեսուած է Արցախ փախստականների վերադարձ: Իսկ փախստականները հիմնականում ատրպէյճանցիներն են: Հետեւաբար, եթէ մօտ 80 հազար մարդ վերադառնայ Արցախ եւ զրաւեալ տարածքներ, որտեղ ժամանակին ապրել եւ զրանցուած են եղել, ապա նոյնիսկ վեց ամիս յետոյ հանրաքուէ անցկացնելու դէպքում Արցախը կը մնայ Ատրպէյճանի կազմում: Իսկ Սերժ Սարգսեանին կը ստիպեն ստորագրել ցանկացած փաստաթուղթ, քանի որ թոյլին, ոչ լեռնազին արտաքին աշխարհը միշտ էլ հեշտութեամբ կարող է ստիպել անել իր ուզածը:

- Մարդկային սկզբունքների մասին խօսելիս եւ Սերժ Սարգսեանը, եւ Էդուարդ Նալբանդեանը յայտարարեցին, թէ դրանք առաջարկներ են, եւ դեռեւս սկզբունքներ չեն: Ու այդ առաջարկները դեռ կարող են փոխուել:

- Նրանք ընդամենը բառախաղով են զբաղուած՝ հասարակութեանը խաբելու համար: Այն ձեւակերպումները, որ տրուած են, այն, ինչ ասեց Մեթիու Բրայզան, արդէն յուշում են ամէն ինչ: Ես վստահ եմ, որ այլեւս ոչ մի քննարկում չի լինելու Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիևի հետ: Ամէն ինչ որոշուած է արդէն, մնում է փաստաթուղթը ստորագրել ու հրապարակել: Մենք շատ լաւ գիտակցում ենք, թէ ինչ է կատարուում:

- Ուսանք կարծիք են յայտնում, որ ընդդիմութիւնը պետք է վերսկսի իր հանրահաւաքները, քանի որ ԼՂ խնդրում վիճակը շատ անելի վատ է, քան կարելի է պատկերացնել:

- Ես ինքս էլ այն կարծիքին եմ, որ պէտք է վերսկսել հանրահաւաքները: Սակայն նման որոշում կայացնելու իրաւունքը վերապահուած Լեւոն Տէր-Պետրոսեանին: Նա մեզանից տասն անգամ իմաստուն է եւ մեզանից լաւ գիտի, թէ երբ է պէտք վերսկսել հանրահաւաքները: Եթէ հիմա Տէր-Պետրոսեանը գտնուէր, որ պէտք է չի վերսկսել հանրահաւաքները, ուրեմն՝ պէտք է չի վերսկսել հանրահաւաքները, ուրեմն՝ պէտք է հետեւենք նրա խորհրդին: Իսկ երբ հանրահաւաքները վերսկսուեն, բոլորս պէտք է դուրս գանք փողոց, բոլորը՝ մէկ մարդու նման, քանի որ դա նշանակում է՝ վիճակը շատ լուրջ է, եւ պէտք է ազդով լին տէր կանգնենք մեր ձեռքբերումին:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

*HMM Ladies Auxiliary*  
*New Years Eve Celebration*

Featuring Live Entertainment by DJ Hratch

December 31, 2008, at 8:00 p.m.  
HMM Garo Soghanalian Hall  
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Admission: \$50.00 • Ages 6-12: \$25.00 • Ages 5 & Under Free

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

**Ս.Դ.Յ.Կ. 121 ԱՄԵԱԿ**

**ՏԱՐԲԵՐ ԳԱՂԱՓԱՐԱՆՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ**

Սոցիալիզմ, Սոցիալ-Դեմոկրատիա, Լիպերալիզմ, Քափիթալիզմ, Կոմունիզմ, եւ այլն, գաղափարախօսական այս բացատրութիւնները, յատկապէս վերջերս, Ամերիկայի նախագահական ընտրութիւններու ընթացքին յաճախ հրապարակ նետուեցան հասկացողին եւ չհասկացողին կողմէ: Թէ քաղաքական, եւ թէ մանաւանդ ժողովրդային ընդհանուր գանգուածը ի՞նչ կը հասկնայ այս արտայայտութիւններէն, եւ կամ ինչպէ՞ս կը բացատրուի իրեն, օրինակի համար, «սոցիալիզմ» բառը: Քառորդ դարէ աւելի ապրելով այս երկրի մէջ, եւ բաւականին մօտ ըլլալով թէ զարգացած, համալսարանակ դասի, ինչպէս նաեւ պարզ ամերիկացիներու մտածողութեան հետ, իմ ստացած տպաւորութիւնս այն է որ ամերիկացին, առ հասարակ կ'անգիտանայ գաղափարախօսական, «խտեօլօփիք» այս արտայայտութեանց իմաստն ու բովանդակութիւնը, որմէ նաեւ կը բղիւի անոնց հանդէպ իր սխալ ըմբռնումը: Այսպէս, հոս, Ամերիկայի մէջ, «սոցիալիզմ» արտայայտութիւնը ընդհանրապէս կը շփոթուի խորհրդային շրջանի կիրարկուած համայնավարութեան հետ, որուն հանդէպ ամերիկեան տնտեսական դրութիւնը, քափիթալիզմը, ժխտական կեցուածք ունի կամ ունէր: Այնպէս որ տեմոքրատիկ թեկնածու եւ այժմ ընտրեալ նախագահ (President-elect) Պարեք Օպաման ամբաստանուեցաւ իբրեւ «սոցիալիստ», ենթադրելով որ ամերիկացի սովորական ընտրողը իր քուէն կը զլանայ նման մտածողի մը: Նաեւ սխալ հասկացուած արտայայտութիւն մըն էր «հարստութեան վերաբաշխում (Redistribution of wealth) սկզբունքը, որ ներկայացուեցաւ իբրեւ «ունեցողէն առնուիլը եւ չունեցողին տրուիլը» առանց որ այս վերջինը արժանի ըլլայ անոր, այսինքն տեսակ մը գողութիւն ունեցողէն: Նաեւ այս սկզբունքը նկարագրուեցաւ տեսակ մը Ռոպին Զուտեան արկածախնդրութիւն: Ընթերցողները պէտք է յիշեն միջին դարերու ֆիլմերու մէջ «անմահացած» Ռոպին Զուտ հերոսը, որ Անգլիոյ հարուստներէն կը «գողնար», աղքատներուն բաժնելու համար: Այսպէս ուրեմն ըստ ամերիկեան հասկացողութեան «սոցիա-

լիստ» ըլլալը դէմ էր ամերիկեան քափիթալիստական տնտեսական դրութեան սկզբունքային ըմբռնումներուն, որոնք կը ներկայանան իբրեւ ազատ, «լիպերալ» շուկայական դրութեան ձեւով, ինչպէս նաեւ անհատական, ազատ նախաձեռնութեան ձեւով: Այսօր մանաւանդ, Ամերիկան մխրճուած է ահաւոր տնտեսական տագնապի մը մէջ, որը ուղղակի արդիւնք է իր պաշտպանած տնտեսական դրութեան, այսինքն ընչազաղցութեան, փտախտի, վստահութեան շահագործումի եւ նման թէ մարդկային եւ թէ վարչակարգային խոցելի ընթացքի արտայայտութեանց: \*\*\*

Օրերս կը նշուի Ս.Դ.Յ.Կ.եան 121 ամեակը: Ծրագրուած է պատշաճ յայտագիր, կարեւոր այս հանգրուանին նուիրուած, անգամ մը եւս մեր ժողովուրդին ցոյց տալու հաջողաբար մտածողութեան անդրանիկ կուսակցութեան գրաւած տեղը մեր ազգային կեանքէն ներս, եւ անոր հետապնդած ուղին որ անշեղօրէն դրսեւորուած է 121 տարիներէ ի վեր: Մեր միտքը առաւելի եւս զարգացնել առաջ, անհրաժեշտ կը նկատենք շեշտը դնել գաղափարախօսութեան մը, «խտեօլօփիք» մը կարեւորութեան մասին, ըլլայ քաղաքական-գաղափարական կուսակցութեանց թէ պետական կառավարման համակարգերու ստեղծման ընթացքին: Ինչպէս ըլլայ քաղաքական ուղղութիւն մտածողութիւնը, պարտաւորութիւն մը կայ գաղափարախօսութեան մը, առանց որու տուեալ համայնքում մը կամ պետական համակարգը կը վերածուի քաոսի, անիշխանութեան, եւ անկարող կը դառնայ իրականացնելու հաւաքականութեան մը ցանկութիւնները:

Գաղափարախօսութեան մասին այս կարեւոր ընդհանրացումէն ետք, անցնինք կարգ մը յաճախ օգտագործուած, սակայն չհասկացուած երբեմն ալ սխալ հասկացուած եւ սխալ ներկայացուած դրութեանց մասին, որոնց շարքին կը պատկանի Ս.Դ.Յ.Կ.ի հետեւած եւ որդեգրած գաղափարախօսութիւնը, որ սոցիալ-դեմոկրատիա կը կոչուի, իր անունին հետ սերտօրէն առնչուած: \*\*\*

Նախ եւ առաջ, անհրաժեշտ է խօսիլ «հասարակաց հարստութիւն» կամ «հասարակաց ինչք» հասկա-

ցողութեան մասին (common good): Գոյութիւն ունին եւ ժողովուրդներու հաւաքական կեանքերէն ներս կը կիրարկուին տնտեսական որոշ դրութիւններ, որոնք զբաղած են այս «հասարակաց հարստութեան» տնտեսութեամբ եւ մատակարարմամբ: Երկու ծանօթ եւ կիրարկուող դրութիւնները ունին հետեւեալ անունները.

«Սոցիալիզմ (Ընկերվարութիւն) եւ

«Քափիթալիզմ» (Դրամատիրութիւն)

Ընդհանուր կերպով կարելի է հաստատել որ «սոցիալիզմ»ը առաւելաբար մտահոգուած է վերոյիշեալ «հասարակական հարստութեան» բաժանմամբ եւ ընկերային-սոցիալ կացութեան բարելաման հարցերով, մինչդեռ «քափիթալիստական» - դրամատիրական դրութիւնը առաւելաբար շահագրգռուած է արտադրողական միջոցներով եւ անոնց հետ կապուած նիւթական օգնութեան հարցերով (profits):

«Սոցիալիզմ»ի գաղափարը բաւական հին գաղափար է, եւ սակայն մենք կ'ուզենք անդրադառնալ անոր արդի դրսեւորման մասին, որ կ'երթայ մինչեւ ֆրանսական յեղափոխութիւն: 18րդ դարու երկրորդ կէսերուն, Քարլ Մարքսէն շուրջ 50-60 տարիներ առաջ, երբ Մարքս պիտի հրատարակէր իր աշխարհահռչակ «Համայնավարական Հռչակագիրը» (Communist Manifesto), Ֆրանսայի մէջ կ'ապրէր Կրաքիւս Պապէօֆ անունով քաղաքական մտածող մը, որ Մարքսի նման հրապարակ հանած էր «Ժողովրդային, կամ հաւասարներու հռչակագիր» մը որուն մէջ ան կը պաշտպանէր «հաւաքական ստացուածքի» գաղափարը, (Manifesto of the Equals), որ ստացուածքի համայնավարական սեփականութեան կ'ակնարկէր: Պապէօֆ կը գրէր.

«Կը պահանջենք անհատական ստացուածքի վերացումը: Հողը կը պատկանի բոլորին, եւ անոր արտադրութիւնները ամէնուն համար են»:

Թէեւ Պապէօֆ բանտարկուեցաւ եւ ապա կախաղան հանուեցաւ, իր մտքերը մեծ տարածում գտան: Քարլ Մարքս Ֆրանսացի այս մտածողէն շատ բան փոխ առաւ, առանց որ ինք խոստովանի այդ մասին: Ինչ որ դասական «Մարքսիզմ» կը ճանչցուի, իր «սոցիա-

լիստական» սկզբունքներն են, ըստ որոնց ընկերութիւնը, այնպէս ինչպէս նկարագրուած է Քարլ Մարքսի հռչակաւոր «Communist Manifesto»ին մէջ, «Քափիթալիստական» դրութեան տակ երկու խումբերէ կը բաղկանայ, մէկը, փոքր եւ հարուստ, միւսը մեծ եւ աղքատ: Աւելի առաջ երթալով, ինչ որ «մարքսիստական սոցիալիզմ» կը ճանչցուի, կը հանդիսանայ մարդկային հասարակութեան եւ բնութեան զարգացման օրէնքներու պարզաբանման մէկ յատուկ ուսմունք մըն է, ճշմարտութեան հասնելու կարեւոր բանալի մը:

Ս.Դ.Յ.Կ.ը հաւատարիմ մնալով հանդերձ սոցիալիզմի գաղափարներուն, ժամանակի ընթացքին վերանայեց անոր առաւել յեղափոխական թեքումները եւ ծայրահեղութիւնները, ձախ գործելակերպը, եւ որդեգրեց գաղափարախօսութիւն մը որ իր անկիւնաքարը ունեցաւ դեմոկրատական ըմբռնումներու մէջ: Մէկ խօսքով սոցիալիստական շարժումը վերածուեցաւ դեմոկրատական շարժումի մը, այնպէս ինչպէս ան կ'ըմբռնուի դեմոկրատական սկզբունքներով առաջադրուող երկիրներու մէջ - Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Սքանտինաւեան երկիրներ, եւ այլուր: Հետեւաբար, ժողովրդային բարեկեցութիւնը, «հասարակական ստացուածքի» արդար բաժանումը, ժողովրդավարական կարգերու հաստատումը, երաշխաւորելով քաղաքացիներու իրաւունքներու պաշտպանութիւնը, տնտեսական սեփականութիւնը, ազատ-շուկայական փոխ-յարաբերութիւններու կարեւորութիւնը, եւ նման ժողովրդավարական սկզբունքներ, որոնք հիմքը կը կազմեն առողջ եւ արդար ընկերութեան մը:

Ֆրանսացի փիլիսոփայ եւ քաղաքական մտածող Ժան Փօլ Սարթր, խօսելով Մարքսիզմի էութեան մասին, կը յայտարարէր թէ ան «հումանիզմ» մըն էր, մարդկայնական վարդապետութիւն մը, որ կը միտէր մարդ արարածի բարեկեցութեան, զարգացման: Մարքսիզմը, Լենինի եւ առաւելաբար Սթալինի բռնապետութեան միջոցաւ, պարպուեցաւ իր մարդկայնական նկարագրէն դառնալու համար ամբողջատիրական կարգերու յատուկ հասարակարգ մը, որուն գործնական

Շարք էջ 17



**A.B.A. INSURANCE SERVICES**

Life, Health, Group Health, Disability, Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

**33<sup>th</sup> ANNIVERSARY**

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է**

ԵՐԲԵՔ ՈՒԾ ՁԷ ՎԵՐԱՔՆՆԵՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"





# ՄՇԱԿՈՅԹԱԻ ԱՄԻՍ

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Ինչպէս որ ժողովուրդներ կը կերտեն իրենց ազգի պատմութիւնը, նոյնպէս ալ այդ պատմութիւնը իր որոշիչ դերը կ'ունենայ սոցիալական ժողովուրդի նկարագրին ու կեանքի վարքագծին վրայ: Հայ ժողովուրդը իր դարաւոր պատմութեան ընթացքին անցած է բազմաթիւ վերելակայրումներէ եւ ընդ-

ուեցան զանազան միջոցառումներ, որոնցմէ կարելի է յիշատակել.  
- Սուրբ եւ Անմահ աշակերտական Պատարագ, որ տեղի ունեցաւ երկու բաժիններով եւ երկու տարբեր օրեր, նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտներու մասնակցութեամբ: Օրուան պատարագի վարչապետն էր՝ Անտոն Վարդապետ Սարոյեան, որ իր քարոզին մէջ շեշտեց Մերոպ Մաշտոցի,



հանրապէս անոր բաժին ինկած է ճգնաժամային պահերու լինելութեան պայքար մղելու դերը եւ այս առաւելապէս իր դրական ազդեցութիւնը ունեցած է մեր ժողովուրդի նկարագրին վրայ՝ կերտելով հայ մարդու տոկուն տիպարը:

Հայ անհատը, պայքարը որպէս կեանքի պարելակերպ որդեգրած, մահուան կեանքով նուաճած եւ գաղթական մարդու հոգեվիճակով, իր անցեալը պարեցնելու կիրքով, դիմած է հայերէն լեզուին, հայկական սովորութիւններուն, բարքերուն, այլ խօսքով մշակութիւն վահանի վերածած՝ դիմադրած է եւ կը դիմադրէ օտար հողմերու դիմաց, պաշտպանելով իր ազգային լինելութիւնը:

Նոյնը չէ՞ արդեօք հայ ուսուցիչին դերը, ի սփիւռու աշխարհի տարածուած վարժարաններէ ներս ստանձնած իր շնորհակալ աշխատանքով, որուն բերքահաւաքն է մշակութիւնը: Լրիւ տարեշրջան մը Հայ Ուսուցիչը որպէս մշակ անխոնջ ու անվհատ հայ գիր ու գրականութեան սերմերը կը ցանէ մատղաջ հոգիներու պարարտ հողին մէջ սպասելով Հոկտեմբեր՝ Մշակութիւն Ամսուան քաղելու համար հասուն Պտուղները:

Ինչպէս ամէն Հայ վարժարանի մէջ, նոյնն է պարագան եւ Հայ Քոյրերու Վարժարանին, ուր լրիւ տարուան անսակարկ աշխատանքը իր արդիւնքը կու տայ Հոկտեմբեր ամսուան կազմակերպուած զանազան ձեռնարկներով եւ միջոցառումներով:

Արդարեւ այս տարի դարձեալ Հոկտեմբեր ամսուան կազմակերպ-

Սահակ Պարթեւի, Վառձապուհ Թագաւորի եւ Մաշտոցի աշակերտներուն տարած անուրանալի եւ անզնահատելի աշխատանքը՝ որով մենք այսօր կրնանք պաշտպանել մեր ինքնութիւնը հեռու հայրենի անդաստանէն: Աւարտին աշակերտները հաղորդուեցան՝ յարգեցած Մերոպեան շունչով:

- Հայկական ճաշերու եւ Պտուղներու Օր Մանկապարտէզի աշակերտներուն համար, այդ օր մանկապարտէզի սեղանները առատօրէն պատրաստուած էին նուրով, խաղողով, որոնց քով իր պատուական տեղը գրաւած էր լաւաշն ու պանիրը, եւ տակաւին հատիկը, ցորենը իր պատմութիւններով: Մանկապարտէզի ուսուցչուհիները իրենց հայկական տարագներով կարծես մէկական նմուշներ ըլլալին հայոց աշխարհէն եկած, տպաւորելու համար մանուկներու մտքերը եւ պահ մը լեցնելու անոնց հոգիները հայոց աշխարհի բոյրով:

- Հայկական տարագներու մանրանկարներ գծեցին եւ գունաւորեցին ծանօթանալով եւ սորվելով անոնց պատկանած հայկական շրջանները, նաեւ պատրաստուած 3-4-5րդ դասարաններու աշակերտութեան կողմէ:

- Վարժարանի 6-7-8րդ դասարանի աշակերտներու հայկական ճաշի ծրագիր, ուր աշակերտները խմբակներով եւ իրենց ծնողներու օժանդակութեամբ տունէն ներս կը տանին ճաշի մը նախապատրաստական աշխատանքը եւ որոշուած օրը դասարանէն ներս կ'ամբող-

Շաբ.ք էջ 19

## «ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ» ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Կրկին հայ դպրոցը թեւատարած կը դիմաւորէր Հայ Մշակոյթի ամիսը՝ Հոկտեմբերն ու Թարգմանչաց տօնը, կը փառաբանէն մեծաքանի Մերոպ Մաշտոցն ու անոր բերած նպաստը հայութեան:

Western Diocese of the Armenian Church of America  
The Alex Theatre  
The Frank & Rigmor Peloso Trust Fund  
Mrs. May Hannon  
The William H. Hannon Foundation  
Horizon 24-Hour Television  
Asbarez  
Woodbury University



### ԵՐԿԱԹ ՄԱՐԳԱՐԸ

**Ռ. ԿՈՐԻՆ**  
(Շարունակուած նախորդ թիւէն)

- Ասում եմ պա'պ, կապի'ր, այստեղ Պարսկաստան չի, որ էն օրերին պետական շրջանակներում խեթ աչքով էին նայում փողկապ կապողին, այստեղ Ամերիկա է, այստեղ կեանքը տարբեր է, մարդիկ հանդէսներում, ուրախութիւններում եւ պաշտօնական տեղերում փողկապ են կապում, որ սիրուն եւ ճաշակով երեւան, ուրիշներին նմանեն, միթէ պարսկերէն առածը չի ասում՝ ազար խալի նաշաւի ուսուցիչ համուանգ է ջամաթ բաշ (եթէ չես ուզում խաչտառակել մարդկանց նմանի'ր):

-Այլեւս չվիճեցի տղայիս հետ եւ չպնդեցի, նկատելով՝ որ իմ խօսքս տեղ չի հասնի եւ անիմաստ է, նա մի յարմարուող փողկապ կապեց վզին եւ տեսնելով իր սրտի ուզածով է ասաց.

-Դէ՛հ, պա'պ, գնա'նք.  
-Ա'խր, տղայ ջան, չես ասի ո՞րտեղ ենք գնում.

-Յետոյ կիմանաս.

-Վաղուց գիշերը վրայ էր հասել, մեր Ամերիկեան վարձու բնակարանից դուրս եկանք, ամէն կողմ ելեկտրական լոյսերն էին լուսաւորում, իսկապէս ինչ լաւ է կարգադրուած, որ պարտադիր շէնքի չորս կողմերը պիտի լոյսեր վառեն մինչեւ լուսաբաց: Տղայիս ինքնաշարժը կառասնից ուղղեց դէպի փողոց, ապա երկար ու անվերջանալի մի պողոտայ, ինչ պողոտայ էր, չիմացայ, քանի տարի է ապրում եմ Գլենդէլում, դեռ քաղաքին լաւ ծանօթ չեմ: Տղաս լուռ ինքնաշարժն է քշում, ոչ խօսում է եւ ոչ կատակում, գաղափար է քշելով՝ ուշադիր առեւժը դիտելով, երբեմն էլ բշիջանքի հեռախօսով փափսոցով է խօսում, որ ես չհասկանամ, ես չեմ համարձակուած հարց տալ իրեն, լուռ ականջալուր սպասում եմ, տեսնեմ, նա մի բան կասի, թէ՛ չէ՛, որպէսզի ինձ փրկի անորոշ վիճակից, սպասումից, որը շարունակ ուղեղս բորբոքում էր: Տղաս անուշադիր ինձ պապանձած Ջաքարիայի նման միայն մեքենավարութեան կապուող շարժումներ էր անում: Մեքենան անցնում էր երկար ու լայն պողոտայից լուսաւորուած երկու կողմերի սիւների վրայ թառած դեղնաւուն լոյսերով, պողոտան անդորր էր, սակաւ մեքենաներ էին երթեկեկում, երկինքը մնում էր ամպամած՝ առանց երկայնի լայտերների: Մէկ էլ տղաս մեքենան պտտեց մի անպատ բակի մէջ լեցուն մեքենաներով ծածկուած, յարմար տեղում կանգնեց, ապա դառնալով ինձ.

-Պապ հասանք.  
-էստեղ ո՞րտեղ է.  
-Ուրախութիւնների սրահ է.  
-Միթէ՞ ինչ կայ հաստեղ.  
-Չիմա որ ներս մտնենք, կը տեսնես, ինչ կայ:

-Չետաք բերութիւնն ինձ դարձրել էր անհամբեր, որքան շուտ կուզէի այս առեղծւածի պատասխանը իմանալ: Տղայիս հետ առաջացանք դէպի սրահ, նա առաջ, իսկ ես նրան հետեւելով, սրահի դուռը բացելուն պէս երեխաներս, տիկինս ուրախ կանչեցով՝ -շնորհաւոր ամուսնութեանդ տարեդարձը, շրջապատեցին ինձ, ես անտեղեակ ամէն ինչից ապշած քար էի կտրել, մտածում եմ, թէ էս ինչ է անցնում իմ շուրջը, լրջուց եմ, թէ՛

երագում, երաժշտութիւնը մէկ կողմից ուրախ պարեղանակով նւագել սկսեց, ծայրէ-ծայր հրաւիրեալներով սրահում աշխուժութիւն տիրեց: Ես համարձակութիւն գտայ աղջկաս հարցնել միջոցառումի շարժառիթը.

-Աղջի Սաթենիկ ինչ կայ այսօր, որ հաւաքել էք այստեղ, Վարդանը երկար ճամբայ բերելով մի բառ չասաց ինձ, թէ ուր է տանում, ոչ ոք ինձ բան չի ասել, նոյնիսկ՝ մէրդ, դու էն Աստուծոյ գոնէ դու ասա՛.

-Հայրիկ ջան, քո եւ մայրիկի ամուսնութեան վաթսուն ամեայ տարեդարձն ենք տօնում, մայրիկն էլ լուր չի ունեցել, գաղտնի ենք պահել ձեզանից այս հանդիսութեան տեղի ունենալը, որպէսզի ձեզ անակնկալի բերենք, յանկարծակի բերելով աւելի շատ ուրախացնենք.

-Եղբայրդ էստեղ բերելու համար մասթափ արաւ ինձ՝ մի բառ չխօսելով.

-էյդպէս էր կարգադրուած հայրիկ.

-Ինչ ասեմ, լաւ էք արել, շնորհակալ եմ ձեզանից, որ գոնէ այս ծերութեան հասակում սիրոյ եւ յարգանքի էք արժանացնում:

-Ձաւակներս եւ թոռներս ծաղկի թերթիկների պէս մեզ՝ ինձ ու կնոջս, առել էին իրենց մէջ, սիրալիր խօսքերով մեզ շնորհաւորում եւ համբուրում էին.

-Մէկ էլ տեսնեմ աղջիկս ինձ դիմեց ասելով.

-Հայրիկ, մայրիկին համբուրիր եւ շնորհաւորիր.

-էդ միջոցին ես շարեցի, վերագտնելով ինձ պատասխանեցի.

-Աղջիկս իմանում ես ինչ ես ասում, ինչպէս կարելի է էսքան ժողովրդի մէջ մօրդ համբուրեմ, ամօթ է, խպնանք պէտք է, չէ, այդպէս բան չեմ անի.

-Միթէ՞ սիրոյ ցուցադրութիւնը միայն համբուրով է պրն. էղբարդ.

-Վստահաբար ո՛չ, այլ նրա գործնականի եւ յարատեւութեան մէջ է.

-Աղջիկս, ես ու մէրդ վաթսուն տարի իրար հետ ապրել ենք եւ դեռ Աստուծոյ յոյսով ապրելու ենք, որն ապացոյցն է մեր սիրոյ: Մենք հայ ենք, ունենք մեր սովորութիւնները, հայ ընտանիքի գոյութիւնն իր հաւատարմութեան, ամօթխածութեան եւ լրջութեան մէջ է, ոչ թէ թեթեւալիկ ուրիշների մօտ իրար վրայ թռնելն է, իբր թէ սիրում են իրար, սիրոյ ուժը ամուսնութեան երկարակեցութեան մէջ է, ինչպէս ցորեանը դրսից բան ցոյց չի տալիս, սակայն երբ նա հացի է վերածուած ուժ է տալիս, գոյութիւն է պարգեւում, սէրն էլ անտես է, սա-կայն երբ ականատեսն ես լինում նրա արդիւնքին ու պտուղին, նոր համոզուում ես նրա ուժին ու գոյութեան, սիրոյ աղբիւրը անցնում է անտես ժայռերի ու ապառաժների միջից բիւրեղանալու, լոյսին եւ յաւերժութեան հասնելու համար:

Պրն. Մարգարի այս մեկնաբանութիւնն իմ սրտից խօսեց, իրօք հասարակութեան մէջ մարմնի կէսը բաց աղանու պէս կտուցկտուցի կպչել ու օձի պէս շլինքով փաթաթելն ոչ թէ դա սէր է արտայայտում, այլ՝ սեքս, , թոյլ տւէք, կոպտորէն ասեմ՝ անամօթութիւն:

-Երբ աղջիկս նկատեց իմ խիստ կեցւածքը, այլեւս չպնդեց: Մեր ընտանեկան կազմով շարժեցինք դէպի մեզ համար դասաւորուած սեղանները, զարդարուած սեղաններ տեսակ-տեսակ աղցաններով, ուտելիքներով եւ խմիչքներով: Մեր տեղաւորելուն պէս նւագախումբը դադարեցրեց իր ականջ խլացնող ամպագոգոտ նւագը: Երիտասարդ բարետես երգիչը շնորհաւորանքի խօսքեր ասաց, սպաւորիչ խօսքեր.

-Շատ յարգելի հայրիկ ու մայրիկ, ձեր ամուսնութեան 60 ամեայ ոսկեայ տարեդարձը ամենայն սրտով շնորհաւորում ենք մաղթելով Աստուծային շնորհներին ու պսակին արժանացած ձեր ամուսնական կեանքին էլ աւելի շարատեւութիւն եւ արեւշատութիւն, թող արեւը անամպ շողայ ձեր գլխի վերեւ անվրդով ու խաղաղ: Դուք 60 տարիներ առաջ, մեր հայկական սովորութիւններին համապատասխան, մեր ազգային եկեղեցւոյ գմբէթի ներքոյ, քահանայի օրհնանքով մէկ մարմին դարձաք՝ ապրելու միասնական արդիւնաւէտ կեանք, համբերութեամբ ու հնազանդութեամբ մէկը միւսին ապրեցիք այդ տարիները վստահաբար կեանքի խաղերին լայնախոհ կեցւածքով, դառն ու քաղցր օրերի գիտակցութեամբ եւ ահա-լաստիկ շնորհագարդ կեանքի այս տարիքին հասած վայելում էք ձեր իսկ ներդրումներով ու գոհողութիւններով աճեցրած ու մեծացրած զաւակների սէրն ու յարգանքը, թող շարատեւ կեանքը ժպտայ ձեր զաւակների եւ թոռների հետ միատեղ ամենայն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ:

-Երգիչի իմաստալից եւ ուշադրաւ խօսքը ընդառաջէն ներկաների յոտնկայս բուռն ծափահարութեամբ: Սրահի չորս կողմերից

մեզ մօտեցան հարագատներ եւ բարեկամներ շնորհաւորելով մեզ.

-Մարգար, Վարդուհի, շնորհաւոր ձեր տարեդարձը, Աստուծանից առողջութիւն եւ ուրախութիւն ենք խնդրում, բարիքալա (շատ ապրէք) երեխէ՛ք, որ ձեր հօրն ու մօր համար հսպէս հանդէս էք բռնել, միշտ պատուով ապրէք:

Հանդիսութիւնն ինձ յիշեցրեց ընկերոջս պատմածը մի իրանահայ ամուսնի մասին, որ իրենց ինամակալ-պաշտպան անգլիախօսի հետ գնացել էին հասարակական ապահովագրութեան կենտրոնը գրանցելու, պատասխանատուն հարց էր տւել.

-Ներողութիւն, քանի տարի է ամուսնացել էք.

-Երեսուն տարի է.

Նա զարմացած դարձել էր նրանց հարցնելով.

-Երեսուն տարի, եւ դեռ միասին էք ապրո՞ւմ.

-Այո՛, միթէ անսովոր բան կա՞յ.

-Իմ հասկացողութեամբ անսովոր՝ երեսուն տարի մէկ յարկի տակ ապրելը:

Եթէ նա լսէր 60 տարիների մասին, զարմանքի փոխարէն պիտի ապշէր: Հայ ընտանիքի գոյգեղի հաւատարմութիւնը՝ մէկ կեանք ապրելու խոստումով տրուած եկեղեցւոյ կամարների ներքոյ՝ Աստուծային շնորհների տւելութեամբ գորացած, մեծ դերակատարութիւն է ունեցել ցեղասպանութեան ենթարկուած եւ հայրենիքից քշուած հայութեան համար, անտէր ու անիշխան մեր սփիւռքեան իրականութեան մէջ հայապահպանման առումով: Հայ ընտանիքը, դպրոցը եւ եկեղեցին եռեակ գորութիւն հային հայ պահելու ամրակուռ սիւններն ու կուսաններն են: Համոզուած եմ՝

Շար.բ էջ 17

**BEAT ENTERTAINMENT PRESENTS**  
**New year's Dinner Dance**  
With the nation's most Experienced DJ.  
**Heartbeat**  
Wednesday December 31st 2008 @ IMPERIAL Palace  
1175 N. Lake ave. Pasadena Ca. 91104

Doors Open 8:00 pm.  
Incredible show and surprises,  
Gourmet 20 kinds of appetizers and 3 main courses,  
Bottle of Black Label/Vodka/and Wine Included.  
Tickets \$100 advance \$125 at the door

For more information please contact:  
Vasken@ 818-288-7188 Or 818-956-1555.  
Or email djvasken@yahoo.com

**PROUD SPONSORS**  
PAOLO GARDINI  
Giorgio Cosani  
Arka Photo  
Bar & Lounge  
Men's SUIT OUTLET  
Vrej Pastry  
Elite Zone  
Gianni Couture



# 11th International Armenia Fund Telethon 2008

November 27, 2008 **Thanksgiving Day**

8:00am – 8:00pm PST

**BROADCAST  
INFORMATION**



My home, Armenia

City-State-Region	Station	Digital Channel	Cable Channel	Satellite	Time
<b>Arizona</b> Phoenix / Scottsdale/Tempe	<b>KAZT</b> Ch. 7	<b>7.1</b>	• <b>COX</b> 13 • <b>QWEST</b> 13	• <b>DirectTV</b> 7 or 887 • <b>Dish</b> 27	<b>12pm-3pm MST</b>
<b>Central California</b> Fresno & Central California	<b>KGMC</b> Ch. 43	<b>43.1</b>	• <b>COMCAST</b> 10	• <b>Dish</b> 43	<b>8am-8pm PST</b>
<b>Northern California</b> San Francisco & Bay Area	<b>KTSF</b> Ch. 26	<b>26.1</b>	• <b>COMCAST</b> 8	• <b>DirectTV</b> 26 or 893 • <b>Dish</b> 26 or 8237	<b>8am-7pm PST</b>
<b>Southern California</b> Greater Los Angeles Area	<b>KSCI</b> Ch. 18	<b>18.1</b>	• <b>ALL CABLE SYSTEMS</b> 18	• <b>DirectTV</b> 18 • <b>Dish</b> 18	<b>8am-8pm PST</b>
<b>Massachusetts</b> Greater Boston Area	<b>WMFP</b> Ch. 62	<b>62.1</b>	• <b>RCN</b> 21 • <b>CHARTER</b> 25 • <b>TIME WARNER</b> 17 • <b>COMCAST</b> 17, 19 or 20	• <b>DirectTV</b> 62 or 956	<b>7pm-11pm EST</b>
<b>Michigan</b> Detroit	<b>WMYD</b> Ch. 20	<b>20.1</b>	• <b>CHARTER</b> 3, 6, 10 or 20 • <b>COMCAST</b> 3, 13 or 20	• <b>DirectTV</b> 887 or 20 • <b>Dish</b> 8034	<b>12pm-6pm EST</b>
<b>Missouri</b> St. Louis & Jefferson County	●	●	• <b>CHARTER</b> 8 or 98	●	<b>10am-10pm CST</b>
<b>Nevada</b> Las Vegas	<b>KVCW</b> Ch. 33	<b>33.1</b>	• <b>COX</b> 6	• <b>DirectTV</b> 33 • <b>Dish</b> 33	<b>9am-5pm PST</b>
<b>New York</b> New York City	<b>WMBC</b> Ch. 63	<b>63.1</b>	• <b>RCN</b> Ch. 19 • <b>CABLEVISION</b> Ch. 20 • <b>TIME WARNER</b> Ch. 10, 18, 21, 63 or 78	• <b>Dish</b> 63 or 8115	<b>12pm-6pm EST</b>
<b>New Jersey</b>	<b>WMBC</b> Ch. 63	<b>63.1</b>	• <b>CABLEVISION</b> 20 • <b>PATRIOT MEDIA</b> 19 • <b>COMCAST</b> 19, 20, 23 or 63 • <b>TIME WARNER</b> 20, 21 or 63	• <b>Dish</b> 63 or 8115	<b>12pm-6pm EST</b>
<b>Texas</b> Houston	<b>KTBU</b> Ch. 55	<b>55.1</b>	• <b>EAGLE</b> 55 • <b>COMCAST</b> 55 • <b>TVMAX</b> 7 or 5	• <b>DirectTV</b> 55 or 952 • <b>Dish</b> 55 or 8382	<b>4pm-10pm CST</b>

**GlobeCast WorldTV North American Satellite Coverage**

- H1-Armenian Public Television Ch. 114
- Armenian Russian Television Network Ch. 758
- Horizon Armenian Television on TelStar 5

**800-888-8897**

111 N Jackson St. Suite 205  
Glendale, CA 91206

Webcast **www.armenianfund.org**





**ՅՈՒՇԵՐ**

**«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՆՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱՆԱՅԵԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ**

Ռէզա Շահի հրահանգով փակուեցին իրանահայ ազգային դպրոցները: Ղազուխի հայոց դպրոցի ընդարձակ եւ լուսավոր դասարանները, որոնք այն օրերին միակն էին քաղաքում, իրենց գեղեցիկ արտաքինով ու կառուցուածքով, գրգռել էին Ղազուխի Կրթական շրջանակների ախորժակը, որոնք նպատակ ունէին գրաւելու ազգային շէնքը: Այդ չարանեղ ծրագիրը գործադրելու նպատակով Կրթական վարչը իր մօտ է կանչում Հոգաբարձու թեան նախագահ՝ Դոկտ. Արմենակ Աֆթանդիբեանին եւ խստորէն պահանջում է շէնքը յանձնել Կրթական հիմնարկին: Դոկտորը ընդդիմանում եւ անմիջապէս խորհրդակցական ժողով է հրահարում: Ժողովը որոշում է ծխատէր քահանան անմիջապէս ընտանեօք տեղափոխուի դպրոցի դասարանները, որով կարելի կը լինի փրկել ազգային շէնքը գրաւումից: Այդպէս էլ եղաւ: Կենսունակ եւ ստեղծագործ հայ ժողովուրդը որ անցել է բազմաթիւ դժուարութիւնների բովից, նորէն ընդդիմացաւ բռնակալութեան դէմ: Ու թէեւ մեր համայնքը զրկուեց ազգային դպրոց ունենալուց, բայց սկսեցինք գաղտնի դասընթացներ եւ աշխատեցինք մատաղ սերնդին տալ հայեցի դաստիարակութիւն եւ սովորեցնել հայերէն լեզուն: Ապագան ցոյց տուեց, որ մեր առաքելութեան մէջ մասամբ յաջողեցինք:

Բազմաթիւ օրինակներից կարող եմ յիշել իմ երեք որդիներին՝ համալսարանի դասախօս, բանաստեղծ եւ հայ թերթի խմբագիր, որոնք ազատօրէն գրում եւ կարդում են Մայրենի լեզուով: Մինչդեռ, հայոց դպրոցը փակուելուց իմ անդրանիկ գաւակը հագրւեց 3րդ բաժանմունքի, 2րդը 1-ինի, իսկ կրտսերը մանկապարտէզի սան էր:

Այս բոլորն եւս նոյնութեամբ պատմում եմ, պարզ է, ոչ թէ ինքնաշեփորման նպատակով (դրան եւս ես պէտք չունեմ յատկապէս ծերութեան այս տարիքում), այլ

պարզապէս ցոյց տալու համար, որ հայը ոչ մի պայմանում յուսահատուելի չզդիտէ եւ հայոց լեզուն կարելի է սովորել եւ սովորեցնել, եւ հայեցի դաստիարակութիւն տալ հասնող սերնդին, նոյնիսկ ամենադժնդակ պայմաններում:

Այսպէս էր նաեւ Իրանի բոլոր հայաբնակ քաղաքներում եւ գիւղերում: Բազմաթիւ ուսուցիչներ անտեսելով ամէն մի վտանգ - նուիրուեցին այս սրբազան գործին: Երկրորդ աշխարհամարտը սկսուելուց յետոյ գահընկէց եղաւ միապետը եւ երկրում որոշ բարեփոխութիւններ կատարուեցին: «Բարեփոխուած» իշխանութիւնը որոշ ազատութիւններ «շնորհեց» ժողովրդին եւ իրանահայութիւնը անմիջապէս գործի անցաւ վերաբացելով իր դպրոցները:

Այդ առթիւ դիմումներ եղան նաեւ Ղազուխում եւ դրական խոստումներ եղան պետական շրջանակների կողմից: Ինձ մտում էր դատարկել դպրոցի դասարանները: Այդ օրերին իմ մէջ մի միտք ծագեց, դպրոցի ընդարձակ բակի արեւելեան մասում, սենեակներ կառուցել քահանայի բնակութեան եւ Հոգաբարձութեան ժողովարանի համար: Այդ նպատակով հանդիպեցի Ղազուխի ծխականներից Արուս եւ Միսաք Ռոստոմեաններին եւ առաջարկեցի իրենց ծնողների յիշատակին մէկ սենեակ կառուցել ազգապատկան հողամասի վրայ: Սիրով ընդունեցին առաջարկս: 1942 թուի Մայիսին սկսեցինք կառուցումը, մտում էր ուրիշ բարեբարներ եւս գտնել: Այդ առթիւ դիմեցի բարեպաշտ ազգային թաղէոս Օհանջանեանին: Նա խոստացաւ իր կնոջ, վաղամեռիկ՝ Յամիկի յիշատակին, հոգալ մէկ սենեակի կառուցման ծախսը: Ապա Մարիամ Յովհաննիսեանը իր ամուսնու հանգուցեալ Բէգլար Յովհաննիսեանին եւ Տիկ. Ռաբինկա Պողոսեանը իր եղբոր՝ Մահակ Բաբայանի յիշատակին, յանձն առան վճարելու միւս սենեակների կառուցման ծախսերը:

Իսկ Հրաչ Կարապետեանը իր հօր՝ Յակոբ խան Կարապետեանի յիշատակին կառուցեց մէկ ընդարձակ ջրամբար: Այդպիսով մի քա-

նի ամիս յետոյ, ազգային հողամասի վրայ կառուցուեցին չորս ընդարձակ սենեակներ, իրենց յարակից յարմարութիւններով, որոնցից 3-ը յատկացուեց հոգեւոր հովուին, իսկ մէկը որպէս Հոգաբարձութեան գրասենեակ: Ամէն տարի հոգեհանգստեան արարողութիւն է կատարում Ղազուխի Ս. Հռիփսիմէ եկեղեցում, համայնքի բարերարների ննջեցեալների յիշատակին: Եօթը տարի լուսթիւնից յետոյ, 1942 թուի Ապրիլի 1ին, կրկին անգամ պիտի հնչէր Ղազուխի հայոց ազգային դպրոցի զանգը: Այդ օրը Ղազուխահայ պատմութեան մէջ կը յիշուի որպէս մի բացառիկ եւ նուիրական օր: Յնձում էր մեր համայնքը: Ամենուէք սօն էր ու խնդութիւն: Դպրոցի բացման նախապատրաստական աշխատանքները կատարուած էին, դասարանները նորոգուած, դպրոցական նստարանները ներկուած էին: Դպրոցի արտօնատէրն էր Վարդան Յակոբեանը (դեղագործ, վկայեալ Փարիզից), իսկ որպէս տեսչուհի Կրթական հիմնարկին էր ներկայացուած Խանում Թասլիմին, որն լրացնում էր բոլոր տուեալները, այդ պաշտօնը ստանձնելու համար: Հոգաբարձութեան կողմից տեսուչ էր հրահարուած Թաւրիզից վաստակաւոր ուսուցիչ՝ Արմենակ Փոխարեանը: Ազգային «Րաֆֆի» դպրոցը վեցամեայ տարրական դպրոց էր, որտեղ պիտի դասաւանդուէր կատարուէր պետական ծրագրով, որի հետ զուգընթաց, մեզ իրաւունք էր տրուած պարապելու հայոց լեզու, կրօն եւ հայոց պատմութիւն: Ապրիլ 1ին դպրոցի բակը լեցուած էր ծովածաւալ բազմութեամբ: Բոլոր դէմքին ուրախութեան ժպիտ կար: Բոլոր ցնծում էին եւ ուրախանում: Առաւօտեան ճիշտ ժամի 11ին ծխատէր քահանայ, ազգային մարմնի անդամները եւ ուսուցիչները բարձրացան դպրոցի պատշգամ եւ դիմաւորեցին ժողովրդի եւ աշակերտութեան խանդավառ ծափերով եւ ուռաներով: Օրուայ նշանակութեան առթիւ խօսեց տողերիս գրողը եւ շնորհաւորեց իրանահայութեան այս մեծ յաղթանակը, եւ ստեղծուած անսպառ ոգեւորութեան մէջ հրահարեց տեղույս

ազգայիններից՝ Լուսթիկ Քէշիշեանին, որ առաջին անգամ լինելով հնչեցնի ազգային դպրոցի զանգը: Վերջինս ժողովրդի ծափահարութեան տարափի տակ հնչեցրեց զանգը, նուիրելով դպրոցին մի շօշափելի գումար: Ապա ժողովուրդը եւ աշակերտութիւնը միասին սկսեցին երգել.

«Հնչում է արդէն զանգը դպրոցի,  
Չանգը հայկազեան հայոց դպրոցի...»

Բոլորը արցունքոտ աչքերով գրկախառնուում, համբուրուում ու շնորհաւորում էին իրար: Տէր Հօր առաջարկով բոլորը երգեցին «Հայր Մեր»ը, ուր աշակերտութիւնը անցաւ դասարանները: Այդ առթիւ մի ընդարձակ թղթակցութիւն ուղարկեցին «Ալիք» թերթին:

Այնուհետեւ Ղազուխը ունեցաւ նաեւ իր պատանեկան եւ երիտասարդական Մշակութային Միութիւնները, որոնք լծուեցին բեղուն գործունէութեան: Դասախօսութիւնները, գրական վէճեր, գեղարուեստական երեկոներ, թատերական ներկայացումներ, ուրախ երեկոներ, նոյնիսկ համերգներ, պարբերաբար յաջողեցին իրար, ուր մասնակցում էին առաջին, հերթին մասնագէտ արուեստագէտներ, ինչպիսիք էին օրինակ վաստակաւոր դերասան, Թիֆլիսից ժամանած, Սարգիս Սվաճեանը իր կնոջ Անահիտ Սվաճեանի հետ, թառիստ եւ երգահան Սերգէյ Սերգէյեանը, իր կնոջ վաստակաւոր երգչուհի Սուրիա Կաջարը (երկուսն էլ ժամանած, գաղթականների հետ Պաքուից):

Սուրիա Կաջարի մասին հետաքրքիր է յիշատակել, որ լինելով ազգութեամբ ատրպէյճանցի, հիանալի կերպով ըմբռնել էր հայ ժողովրդային երգի ոգին եւ այնքան հարագատ էր կատարում այդ երգերը, որ հայ ունկնդիրը դժուարութեամբ էր ընդունում, որ երգչուհին հայ չէ: Այդ ելույթներին փայլ էր տալիս շնորհալի ջութակահար եւ քամանչիստ՝ Երեմ Առուստամեանը (նոյնպէս Պատուիք): Շնորհիւ վերոյիշեալների եւ տեղական երիտասարդ սիրող ուժերի Ղազուխը այդ տարիներին ապրեց Մշակութային եւ գեղարուեստական արտակարգօրէն եռուն կեանք:

**ԲԱՑՈՒԱԾ Է**  
 Հիպնոսաբուժութեան կեդրոն  
 դեկավարութեամբ՝  
**Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի**  
**Փասատիմայի մէջ**  
**Ամէն օր՝**  
**առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ**  
**կ.բ. ժամը 3:00**  
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**  
**Pasadena CA 91104**  
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**  
 «Միտք մարմնի վրայ» բուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
 -Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերմնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:  
 - Մոլութիւններ - սիկարէթ, ալկոլ, թմրադեղեր, եւայլն:  
 - Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհնութիւն, եւայլն:  
 - Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:  
 - Ուսումնական եւ սրբօրային բարելաւում

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
**Palm Springs**

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ԴԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռած*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450





# ՈՂՋՈ՛ՅՆ Ս.Դ. ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 121-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

## Շարունակում էք 1-էն

ուած այս ֆայնայիչ այլապէս ազգակործան իրավիճակը, այլուսահատութեան մատնած էր հայ գիւղացին, արհեստաւորը, ֆաղափացին, պարզօրէն ասած՝ հայ մարդը:

Այո, պատահական չեղաւ Հնչակեան Մայր Կուսակցութեան կազմաւորումը:

Ընդհակառակը, հրամայական դարձած էր հայրենամուէր, գաղափարապաշտ, կազմակերպուած շարժումի մը հանդէս գալը, կարենալ պաշտպանելու համար իր բողոքները լինուած իր ժողովուրդի ֆիզիկական ապահովութիւնը, տէր կանգնելու համար անոր հոգեմտաւոր ժառանգութիւններուն: Վերականգնելու համար իր ազգային հաւաքական կեանքը: Արժանապատուութիւնը: Զայն դուրս բերել իր յուսահատ հոգեվիճակէն: Ազատագրել անոր հայրենիքը Օսմանեան բռնատէր լուծէն:

Այս բոլորը կարենալ ընելու համար պէտք էր զինել հայր: Բոնցկացնել: Կազմակերպել: Պահանջատէր ու ժի վերածել: Նետուիլ կազմակերպուած անդուլ պայքարի մէջ: Վերականգնել իր բարոյական եւ ֆիզիկական օրհասին հասած հաւաքական կեանքը:

Այս էր յեղափոխաշունչ պատգամը Խրիմեան Հայրիկներուն թղթէ շերտփնեքուն պատմութեան: Լ.սելի, հաշուի առնուելու եւ ազատագրուելու համար չկար այլընտրանք: Պէտք էր Գողգոթաներ մագլցիլ: Պայքարիլ:

Այո, պատահական չեղաւ Հնչակեան Մայր Կուսակցութեան կազմաւորումը:

Ընդհակառակը՝ անոր հիմնադրութիւնը եղաւ ազգային պահանջի մը անդիմադրելի պարտադրանք: Սրբատառ մարտահրաւէր մը, ուղղուած՝ Ցեղասպանութեան վախճանական եզրին հասած ողջ հայութեան:

Իր փառաւոր յայտնութեամբ, Մայր Կուսակցութիւնը նոր շունչ, կորով եւ հաւատք ներշնչեց ուշակորոյս հայ մարդուն: Անձնապէս օրինակ հանդիսացաւ գոհարներութեան, համագործակցութեան, ազգին ու հայրենիքի անդուլ ծառայութեան: Մարտիրոսացաւ այդ նախապարհին:

Անգամ, կառավարման բարձունքէն, ան, իր բարձրագոյ պատգամներով ոգեւորեց ողջ հայութիւնը: Յաղթանակի սերմեր ցանց անոր սիրտերուն մէջ: Լիցնելիութեան եւ յաղթանակի հաւատքով ներշնչեց: Մարգարէաբար աւետեց հայութեանը: Արե-

ւելի հորիզոնին վրայ իր ծագման սպասող մշտավատ կարմիր արշալոյսի տեսիլք: Եւ չ'ուշացաւ այդ մեծ տեսիլքը, որ շուտով պիտի նուիրականանար փոխարինելով 18ի, տակաւին նոր հաստատուած Մայրիսեան Հանրապետութիւնը: 21-ի Հոկտեմբերեան Հանրապետութիւնը էր ան, որ, ուրք բեղուն տասնամեակներէ ետք, Խորհրդային հասարակարգի փլուզումով, իշխանութիւնը պիտի գիջէր մերօրեայ, բոլոր ժամանակներու Ազգային Սրբազան Երազ՝ Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութեան, որուն կողմէն դիրքորոշուեցաւ առաջին օրէն:

Պատահական չեղաւ Հնչակեան Մայր Կուսակցութեան յայտնութիւնը, նաեւ դասակարգային պայքարի թատերաբեմի վրայ:

Հնչակեան Մայր Կուսակցութիւնը համոզուած էր, որ ընկերային անհաւասարութիւնն ու մարդու կողմէ մարդու շահագործումն էր մարդկային դժբախտութիւններու գլխաւոր պատճառը: Պէտք էր վերանային անոնք մի անգամ ընդմիջտ: Ընկերային անարդար կապակցութիւնն ու զայն ազատագրական ուղիներ բացաւ ան, շահագործուած, անիրաւուած եւ ննջուած՝ հայ, բուրբ, յոյն, քիւրտ կամ եգիպտացի աշխատաւորին, գիւղացիին եւ ֆաղափացիին առջեւ: «Զէն ի ձեռքին» պաշտպան կանգնեցաւ հաւասարապէս բոլորին: Կոչ ուղղեց անոնց բոլորին միասնաբար ինչպէս յրօշի տակ, եւ միահամուռ պայքարիլ, տիրանալու համար իրենց արդար իրաւունքներուն՝ հաւասար, արդար ու խաղաղ ընկերային կեանքի պայմաններու տակ:

Ժրնեւեան Իր հիմնադրութեան «զէն ի ձեռքին» ազատագրական պայքարի սկզբնական տարիներէն մինչեւ տասնամեակներու վրայ տարածուած մեր ազգային պահանջատիրական պայքարի եւ մերօրեայ հայրենի հանրապետութեան նշանակալի ժամանակներուն՝ Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը, անվիատ, միշտ կանգնած է իր ազգի՝ Սփիւռք- հայրենիք մարտաշարի հայութեան, եւ գոյգ հայրենիքներ՝ Հայաստանի Հանրապետութեան եւ հերոսական Արցախի շարքերուն մէջ, յանուն արդար, ժողովրդավար, սահմանադրական եւ թափանցիկ իրաւակարգի մը նուիրագործման:

Կրկին ու կրկին, եւ միշտ՝ ողջոյն ու պատիւ, Մայր Կուսակցութեան, անոր հիմնադրութեան 121րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով:

## ԵՐԿԱԹ ՄԱՐԳԱՐԸ

### Շարունակում էք 16-էն

առողջ եւ աւանդապաշտ ընտանիքների միասնական ուժով ազգը դառնում է գորեղ իր ազգային արժէքներին նախանձախնդիր: Յաւօք մեր օրերի պայմաններում որոշ երիտասարդներ մեր հայկական կանոններին եւ օրէնքներին հակառակ ապրելակերպով վտանգում են հայ ընտանիքի առաքելութիւնը:

Պրն. Մարգարէ խօսքը շարունակեց առաւել ոգեւորութեամբ.

«Երգիչի յայտարարութեամբ բեմ բարձրացաւ մեծ տղաս՝ Վահանը, նա որդիական ջերմ բառերով շնորհաւորելով ասաց.

«Սիրելի՛ հայրիկ եւ սիրելի՛ մայրիկ, մենք՝ գաւազները, հարսները եւ թոռները խորհրդակցաբար կազմակերպեցինք այս գիշերուայ հանդիսութիւնը՝ ձեր ամուսնութեան 60 ամեակը գնահատելու եւ արժեւորելու համար: 60 տարիների միասնական ձեր իմաստալից կեանքի պտուղն ենք մենք, որ անվերապահ ներկրումով ու ծով նեղուծիւններով մեզ մեծացրել, ուսման տուել, ապա յանձնել կեանքին: 60 տարիներ ասելը շատ հեշտ է, սակայն գալ եւ խորանալ այդ տարիների ընթացքի մէջ, մէկ-մէկ դարձնել այդ տարիների էջերը, նոր կը նկատենք, թէ ինչ բանող ձեռքերի նեղութիւններով ու կեանքի զոհողութիւններով են կառուցուած այդ տարիները, ինչ յոյսերով ու յոյսերով են տարիները յաջորդել իրար վասն մեր բարեւոյ եւ պատուաւոր կեանքի, ահա այդ բոլորի համար դուք արժանանում էք մեր որդիական սիրոյն: Անտեղի աւաճ չէ՝ որ ծնողի նկատմամբ սէրն ու յարգանքը Աստուծային պատէր է, պարտք եւ արժանի ենք համարում այս միջոցառման շնորհիւ պատուելու եւ յարգելու ձեզ: Անպարտք ուրախութիւնն է մեզ պարտել, որ վայելում ենք ձեր շուքն ու հովանին միասնաբար ներկայ հանդիսականներով: Սրտագինս շնորհաւորում ենք ձեր ամուսնութեան ոսկեայ տարեդարձը, Մենք երախտապարտ ենք ձեզ, ձեր նեղութիւնները անփոխարինելի են, քանի որ ձեր ողջ երիտասարդ կեանքի ուժն ու կարողութիւնը մեր ճամբին է մաշուած, չեն կարծում կարող լինենք այդ բոլորի համար մեր որդիական անբեռ զգացումներով թարգմանել լինել, թող որ ձեր հովանին անպակաս լինի, դուք մեր կեանքի սիւներն ու յենարաններն էք: Գաւազը իր սրտի խորքում միշտ ցանկանում է ծնողի յարատեւ կեանքի ներկայութիւնը, ձեզ մաղթում ենք առողջութիւն եւ արեւաշատութիւն:

«Բայց իրօք պրն. Մարգար 60 տարիների երկարակեաց ամուսնական կեանք ամենին վիճակած չէ, դուք բախտաւոր մէկերն էք առանձնապատուկ շնորհեալ օրհնութեամբ: Անկասկած Բարձրեալի կամքն է եղել, այդուհանդերձ մեր կեանքն էլ շատ դար ու փոսերից է անցել, դարբին մարդ եմ եղել, հարազատ մէկին չեմ ունեցել ինձ կռնակ ու պաշտպան կանգնի, բացի կնոջիցս,

որը իմ աջակիցն ու գորավիզն եղաւ կեանքիս ողջ ընթացքում, մուրճի հարւածով եմ հաց հայթայթել, ընտանիք պահել եւ այս օրին հասցրել:

«Շատ բարի պրն. Մարգար, տղայիդ խօսքի աւարտից յետոյ ինչ կատարեց.

«Բոլոր գաւազներին կողմից պատրաստուած 60 ամեակը յիշատակող գեղեցիկ նւէրներ յանձնեցին ինձ եւ կնոջս այդ կաս միջոցով ներկաների ծափողջոյնների տարափի տակ, ապա ես էլ իմ եւ կնոջս կողմից շնորհակալութեան եւ գոհունակութեան խօսք ասացի.

«Ուրախութեան յուզումն է պաշարել մեզ, հրաշալի գիշեր, գիշեր՝ որ լոյսով է ողողուած, մութը փարատուած, մեր ողջ կեանքի աննման գիշեր, պատմական եւ անմոռանալի, ուրախութեամբ եւ ոգեւորութեամբ է խայտում մեր հոգին ի տես մեր գաւազների երախտագէտ շնորհքն ու վարմունքը եւ բոլորիդ խանդավառ ներկայութիւնը, մշակն արժանացած է իր վարձքին, այնտեղ որ երախտագիտութեան գիտակցութիւն կայ, այնտեղ սէր կայ եւ նուիրուածութիւն: Վերջապէս երկար տարիների անտարբերութեան թող պատուեց մեր գաւազները մօտ եւ զգացին, որ ծնողներ սիրոյ եւ յարգանքի կարօտ ունեն ողջութեան օրօք: Փառք Տիրոջ որ մեր այս անուսում տեղով գիտակից գաւազներ ենք դաստիարակել, այսօր մեր կեանքի յաղթութիւնն է, լիապէս բաւարարուած եւ վարձադրուած ենք զգում մեզ, թող որ մեր գաւազները պատուեն իրենց ծնողների նեղութիւնները, լաւապէս ճանաչեն իրենց արմատները եւ գինուելով մեր օրերի գիտութեան գէնքերով օգտակար լինեն իրենց հայրենիքի հզօրացման եւ արդար իրաւունքների ձեռքբերման: Շնորհակալ ենք սիրելի գաւազներս մեր մաղթանքն է առ Աստուած հեռու մնաք փորձանքներից եւ շարունակ դէպի բարին առաջնորդուէք:

«Ապրես պրն. Մարգար, էս ինչ գեղեցիկ եւ յուզիչ արտայայտութիւն ես արել, աչքերս թացացան, անկասկած քո խօսքերը խոր ազդեցութիւն թողած կը լինեն նրանց վրայ, խօսքը որ դիպուկ եւ տեղին է լինում, նա արեւածագի լոյսի պէս անցնում է ենթակայի ողջ էութեան մէջ:

«Շնորհակալ եմ, անշուշտ իմ խօսքով վերջ չգտաւ հանդիսութիւնը, թոռներս բեմ բարձրացան, նրանք իրենց երեխայական ու պատանեկան արտասանութիւններով ու երգերով ճոխացրեցին երեկոյթը, նաեւ ներկաներից եղան սրտի խօսք ասողներ, այնուհետեւ պարն ու խայտանքը ողողեց սրահը:

«Այո՛, սիրելի՛ էջւարդ, գոհ եւ ուրախ սրտով թողեցինք սրահը, գաւազներին կազմակերպած անակնկալը մեծ հաւատք ներշնչեց մեզ նրանց նկատմամբ, իրենց մտածուած ու գիտակից արարքով նոր ուժ ու աւելւն ներարկեցին մեր երակներին ու այսպիսով կեանքը քաղցրացաւ եւ իմաստաւորեց:

(Վերջ)

լայով, որ ուշ կամ կանուխ, Հայաստանէն ներս եւս պիտի ստեղծուին հումանիտական, մարդկայնական կարգեր, որոնք գաղափարախօսութիւնը կը հանդիսանան սոցիալ-դեմոկրատիայի, ինչ որ Ս.Դ.Հ.Կ.ն է: Այս է մեր քաղաքական հաւատամքը, եւ այս է իսկական սոցիալիզմի էությունը:

## ՏԱՐԲԵՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

### Շարունակում էք 6-էն

նապէս պիտի հակառակէր որեւէ սոցիալ-դեմոկրատական մտածողութիւն:

Ս.Դ.Հ.Կ.ը «դժբախտութիւնը» ունեցաւ յաճախ շփոթուելու համայնավարական, խորհրդային կարգերու հետ, պարզ այն մտահոգութեամբ որ Հայաստանը, մեր հայրենիքը կը գտնուէր այդ ընթացի տակ: Ինչ որ սակայն պատահեցաւ

խորհրդային կարգերու փլուզումով Հայաստանի մէջ, ներկայիս հոն կիրարկուող տնտեսական դրութիւնը, իր բեւ թէ իր «լիպերալ» ազատական շուկայական նախաձեռնութիւններով, ունի ամենէն կոպիտ, քափիթալիստական յոռի նկարագիր, ուր քաղաքացիներու ընկերային պաշտպանութիւնը, կրթական համակարգի թերութիւնները, առողջապահական դրութեան մը ոչ-բարենպաստ դրսեւորումնե-

րը, պարզապէս յիշելու համար այդ երկրէն ներս տիրող պայմաններէն ոմանք, ուղղակի կը հակադրուին Ս.Դ.Հ.Կ.ի պատկերացուցած հասարակարգի մը գոյութեան:

Իր 121-ամեակին առիթով, Ս.Դ.Հ.Կ.ը կը մնայ հաւատարիմ իր որդեգրած սոցիալ-դեմոկրատական սկզբունքներուն, համոզուած ըլ-



# ՄԱՐՉԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՅԱՆԸ ԿՐԿԻՆ «ՓԻՆԻԿ»-Ն Է

Ֆուտբոլի Հայաստանի ախոյանի կոչումը 8-րդ տարին անընդմեջ նուաճեց Երեւանի «Փիւնիկը», որը Նոյեմբերի 19-ին, ոսկէ խաղում 2:1 հաշուով առաւելութեան հասաւ «Արարատի» նկատմամբ: Վերջինիս ներկայացուցիչները կարծիքով «Փիւնիկը» անարդարացիորէն է յաղթել:



Հանդիպումը անցաւ խիստ լարուած մթնոլորտում: Առաջին կէսում առաւելութիւնը ամբողջովին «Փիւնիկի» կողմն էր, իսկ «Արարատի» խաղը ակնյայտօրէն չէր ստացուած: Առաջին կէսում դարպասները մնացին անառիկ, սակայն «Արարատը» լուրջ կորուստ ունեցաւ. վնասուածքի պատճառով խաղադաշտը լքեց թիմի առանցքային ֆուտբոլիստ եւ աւագ Ռենատոն: 2-րդ կէսում «Արարատը» արդէն լրիւ այլ ֆուտբոլ ցուցադրեց, սակայն առաջինը գնդակ ընդունեց սեփական դարպասը:

«Փիւնիկի» կազմում գլխի գեղեցիկ հարուածով աչքի ընկաւ փոխարինման դուրս եկած Ալբերտ Թադեւոսեանը: Ընդամէնը 1 ըրոպէ անց Վահագն Մինասեանը դարձեալ գլխի հարուածով հաւասարեցրեց հաշիւը: 80-րդ ըրոպէին հանդիպման գլխաւոր մրցավար Արարատ Ճաղարեանը 11 մետրանոց նշանակեց «Արարատի» դարպասին:

Մրցավարի որոշման հետ համամիտ չէին «Արարատի» ֆուտբոլիստները, որոնք ամէն կերպ մրցավարին փորձում էին համոզել, որ 11 մետրանոց չկար: Ինչեւէ, գնդակին մօտեցաւ Սարգիս Յովսէփեան, բայց նրա հարուածից յետոյ գնդակը ետ մղուեց դարպասաձողից: Դրանով «Արարատի» տհաճութիւնները չաւարտուեցին, քանի որ անմիջապէս կարմիր քարտի արժանացաւ Արտակ Գրիգորեանը, որը թերեւս ինչ-որ արտայայտութիւն էր կատարել:

Յամենայնդէպս մրցավարը նրան հեռացրեց ոչ մարզական պահուածքի համար: «Արարատը» մնաց 10 հոգով եւ ստիպուած էր մեծ ուժերով նահանջել: Հանդիպման հիմնական ժամանակը աւարտուեց 1:1 հաշուով: Նշանակուեց լրացուցիչ 30 ըրոպէ, որոնք անցան քանակական առաւելութիւն ստացած «Փիւնիկի» առաւելութեամբ:

Թուում էր լրացուցիչ ժամանակը եւս կ'աւարտուի ոչ-ոքի, սակայն 118-րդ ըրոպէին Ալբերտ Թադեւոսեանը կրկին գլխի հարուածով առաջ մղեց «Փիւնիկին»: Քիչ անց Թադեւոսեանը, եւ «Արարատի» բրազիլացի մեզէրները ժուլիանոն կարմիր քարտի արժանացան, դարձեալ ոչ մարզական պահուածքի համար: «Փիւնիկը» պահպանեց առաւելութիւնը եւ յաղթեց:

\*\*\*\*\*

Ֆուտպոլի Հայաստանի 2008թ. առաջնութիւն վերջին տուրում «Արարատ»ը «Փիւնիկ»ին յաղթելով 1:0 հաշուով՝ հաւասարուեց առաջատարին եւ այդ իսկ պատճառաւ ախոյանը որոշուեց լրացուցիչ՝ ոսկէ խաղում:

28-րդ տուրում կայացան եւս 3 հանդիպումներ: Կապանում «Գանձասար»ը 0:0 հաշուով աւարտեց «Ուլիս»ի հետ մրցավէճը: Այս ոչ-ոքին էլ բաւական էր, որ կապանցիները առաջին անգամ իրենց պատմութեան մէջ դառնան բրոնզէ մեդալակիր: «Գանձասար»ի փոխարէն մեդալները կարող էր արժանանալ «Միկա»ն, եթէ սեփական հարկի տակ կարողանար յաղթել «Բանանց»ին: Բայց այս խաղում եւս խաղաղ ելք գրանցուեց՝ 1:1: Ետնապահ «Կիլիկիա»ն սեփական յարկի տակ 0:1 հաշուով զիջեց «Շիրակ»ին:

Ոսկէ խաղ  
«Փիւնիկ» - «Արարատ» 2-1

«Փիւնիկ» - «Արարատ» 0-1  
«Կիլիկիա» - «Շիրակ» 0-1  
«Գանձասար» - «Ուլիս» 0-0  
«Միկա» - «Բանանց» 1-1

28-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը վերջնական տեսքը.

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Փիւնիկ» Երեւան	28	18	5	5	40-18	59
«Արարատ» Երեւան	28	18	5	5	48-23	59
«Գանձասար» Կապան	28	13	8	7	39-27	47
«Միկա» Աշտարակ	28	13	7	8	38-28	46
«Բանանց» Երեւան	28	11	8	9	34-25	41
«Ուլիս» Երեւան	28	7	8	13	19-29	29
«Շիրակ» Գիւմրի	28	5	4	19	15-40	19
«Կիլիկիա» Երեւան	28	2	5	21	21-64	11

### ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ու Կայծ Երիտասարդական Միութիւնը շնորհակալութիւն կը յայտնեն Պրն. Վարուժան Գրաճեանին, որ ընդառաջելով մեր կոչին, 80 հատոր գիրքեր նուիրեց մեր գրադարանին:

### ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ընկ. Կէրի եւ Սուզաննա Մինասեան բախտաւորուած են առջինեկ մանչ զաւակով մը եւ անուանած են զինք Սամուէլ: Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորածինի ծնողքին:

«Մասիս»

## ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՆՈՒԱՃԵՑԻՆ 2 ՈՍԿԻ ԵՒ 1 ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼ

Վերջին անգամ Հայաստանը բռնքամարտի Եւրոպայի առաջնութիւններում ախոյան ունեցել է 1991թ., երբ Խրայէլ Յակոբեկոնեանն էր նուաճել ոսկէ մետալ: 17 տարի անց Հայաստանի ներկայացուցիչները մի-անգամից 2 ոսկէ մետալի արժանացան «Հին աշխարհամասի» առաջնութիւնում: Իրենց քաջային կարգերում յաղթողներ դարձան 48կգ Յովհաննես Դանիէլեանը եւ 64կգ Էդուարդ Համբարձումեանը:



48կգ քաջային կարգում Յովհաննես Դանիէլեանը եզրափակիչում մրցեց Սպանիայի ներկայացուցիչ Խոսե Լինարեսի հետ, որ ինչպէս եւ Յովհաննեսը մասնակցել էր 2008թ. Փեքինի օլիմպիական խաղերին: Մրցամարտը ընդհանուր առմամբ անցաւ հայ բռնքամարտիկի առաւելութեամբ եւ խաղն աւարտուեց 7:5 հաշուով:

64կգ քաջային Էդուարդ Համբարձումեանի մրցակիցը եզրափակիչում փորձառու հունգարացի Գիւլի Կատեն էր: Այս մրցավէճը աւարտուեց արդէն առաջին ուսուողում: Հունգարացին վնասուածք ստացաւ եւ հրաժարուեց շարունակել պայքարը, իսկ հայ մարզիկին 20:0 հաշուով յաղթանակ գրանցուեց:



Եզրափակիչում հանդէս եկաւ նաեւ 91կգ քաջային Յոլյակ Անանիկեանը: Ծանր քաջային հայ բռնքամարտիկը 2:9 հաշուով զիջեց Ռուսաստանի ներկայացուցիչ Եգոր Մեխոնցեւին: Ամէն դէպքում Յոլյակը բաւական յաջող հանդէս եկաւ առաջնութիւնում: Նուաճած արծաթէ մետալը Անանիկեանի համար առաջինն էր նրա կարիերայի ընթացքում:

Ռուսաստանը ներկայացնող 57կգ քաջային Արայիկ Համբարձումը եզրափակիչում 1:7 հաշուով զիջեց ուկրաինիայից Վասիլ Լոմաչենկոյին: Իսկ Բելառուսի դրօշի ներքոյ ելոյթ ունեցող Վազգէն Սաֆարեանցը եզրափակիչում 3:7 հաշուով պարտուեց ռուս Լեոնիդ Կոստիլեւին:

Հայաստանը, նուաճելով 2 ոսկէ եւ 1 արծաթէ մետալ, թիմային հաշուարկում գրաւեց 3-րդ հորիզոնականը: Եւրոպայի առաջնութիւնում ամենալավորը հանդէս եկաւ Ուկրաինան (4 ոսկի, 1 բրոնզ): Ռուսաստանը 2 ոսկէ եւ 3 արծաթէ մետալներով 2-րդն էր, թէեւ ռուսերը մարտական կազմով հանդէս չեկան այս առաջնութիւնում:

## ՇԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱՏԱ

Դրեզդենում անցկացուող շախմատի համաշխարհային օլիմպիատայում Նոյեմբերի 19-ին կայացան 6-րդ փուլի հանդիպումները: Այս փուլում Հայաստանի մրցակիցն էր Ատրպեյճանի տղամարդկանց հաւաքականը: Հայաստանի հաւաքականը սկզբունքային այս մրցավեճում կարեւոր յաղթանակ տոնեց 2,5-1,5 հաշուով:



5-րդ փուլի հանդիպումներում Հայաստանի տղամարդկանց հաւաքականը 2,5:1,5 հաշուով առաւելութեան հասաւ հոլանդացիներին, իսկ կանանց թիմը՝ նոյն հաշուով ֆրանսուհիներին նկատմամբ:

4-րդ տուրում Հայաստանի մրցակիցը ֆաւորիտներից մէկն էր՝ Ուկրաինայի հաւաքականը: Հանդիպումը աւարտուեց 2:2 հաշուով: Առաջին 3 տուրերում Հայաստանը հանդիպել էր ցածր վարկանիշ ունեցող մրցակիցների եւ վստահ յաղթանակներ տօնել: 4-րդ տուրում հայ շախմատիստների մրցակիցը Ուկրաինայի հաւաքականն էր, որ իր վարկանիշով 2-րդն է մրցաշարում:

Հայաստանի հաւաքականի կազմում հանդէս եկան Լեւոն Արոնեանը, Վլադիմիր Յակոբեանը, Գաբրիէլ Սարգսեանը եւ Տիգրան Պետրոսեանը: Բոլոր խաղատախտակների վրայ էլ խաղաղ արդիւնք գրանցուեց: Հայաստանի հաւաքականը 4 տուրից յետոյ վաստակել է 7 միաւոր:

Կանանց Հայաստանի հաւաքականն 4-րդ տուրում խոշոր 0,5:3,5 հաշուով զիջեց Չինաստանի հաւաքականին: Մինչ այս հայ շախմատիստուհիները յաղթանակներ էին տօնել, սակայն Չինաստանի դէմ հաւասար պայքար մղել չկարողացան:

Տղամարդկանց հաւաքականը վաստակել է 11 միաւոր եւ Ռուսաստանի հետ գլխաւորում է աղիւսակը, իսկ կանանցը՝ 8 միաւորով՝ 3-13-րդ տեղերը: Կանանց մրցաշարի առաջատարը 10 միաւորով Չինաստանի թիմն է:



### ՇՈՂՈՒՆԵՐ



ԶԱԽՐԻ ԿԻՕՔՃԵԱՆ

ԶԱԽՐԻ ԿԻՕՔՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առթիւ Շոգեհանգատեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Նոյեմբեր 23, 2008ին, Փաստափնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd. յաւարտ Ս. Պատարագի:

Խնդրողներն են՝ Այրին՝ Տիկ. Էլիզապէթ Սարաֆեան-Կէօքճեան Տէր եւ Տիկ. Իվան եւ Գոհար Քէսեան եւ իրենց որդին՝ Արմէն Տէր եւ Տիկ. Ռոտրիկ եւ Սեւան Քիւրքճեան եւ որդին Ակսել Տէր եւ Տիկ. Մանֆրետ եւ Անի Կոթվալտ եւ իրենց որդիները՝ Քրիսթիան եւ Սեպաստիան եւ համայն հարազատներ ու բարեկամներ:

### ՑԱԿԱԿՅՈՒԹԻՒՆ

ՅՈՎԻԿ ԶԱԼԹՈՐՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու Տիկնանց Միութիւնը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանիքին եւ համայն հարազատներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Ընկ. Վարդիվառ եւ Նայիրի Կարկուտեաններուն:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԶԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 7-էն

Չացնեն, ներկայացնելով պատրաստելու ձեւը՝ ներկայութեամբ տնօրէնութեան, ուսուցիչներու, ծնողներու եւ աշակերտներու ինչ որ աշակերտին կու տայ հայերէն աւօրեայ գործածական բառերը սահուն եւ ճշգրիտ կերպով գործածելու վարժութիւնը, յիշարժան է որ աշակերտները մեծ խանդավառութեամբ պատրաստած էին ճաշեր եւ համապատասխան գրքոյկներ, հայկական ոգիով եւ ստեղծագործ մտքով անոնք շատ գեղեցիկ եւ հետաքրքրական ձեւով ներկայացուցած էին իրենց պատրաստութիւնները, զանոնք վերածելով Մասիսի, Արարատի, Արարատեան դաշտի, համեղ կրկնփուկները վերածելով Մեսրոպեան Ա ու Բեն եւ տակաւին անուշները գունաւորած էին հայկական դրօշի երեք գոյներով, իսկական Հայկական ցուցադրութիւն մըն էր արտագրուած Ամերիկայի հայ երեխայի հնարամտութեամբ:

- Վարդանանց մեծ հերոսամարտի եւ Սասունցի Դաւիթի դիւցազներգութեան նախապատրաստական ֆիլմերու ցուցադրութիւն՝ արուեստագէտ Հրաչ Քիւփեւեանի եւ տիկնոջ Ալինա Քիւփեւեանի կողմէ ներկայացուած, որուն ներկայ եղան Յրդ դասարանէ վեր բոլոր աշակերտները: Անոնք մեծ հետաքրքրութեամբ եւ զարմանքով դիտեցին այն բոլորը, որ իրենց պատմութեան գիրքերէն կը սորվէին: Արուեստագէտը՝ Հրաչ Քիւփեւեան, մեծ տպաւորութիւն գործեց բոլորին վրայ եւ մղեց զանոնք հետաքրքրական հարցումներ ուղղելու արուեստագէտի աշխատանքներուն եւ ֆիլմի ընթացքին մասին ի գարմանս Հրաչին: Աւարտին անակնկալ էր ութերորդ դասարանէն 2 աշակերտներու տարագաւորուած բեմ բարձրանալը, կարծես Աւարայրի դաշտէն 2 փրկուածներ հրաշքով մը մեզի միացած էին, անակնկալին հեղինակն էր Տիկ. Ալին Քիւփեւեանը,

որ ֆիլմի մէջ օգտագործելի տարազներով մեզի ներկայացուցած էր ութերորդ դասարանէն՝ տարագաւորուած Ռազմիկն ու Գաթարիանան:

- Կարելի չէր մտածել Մշակույթի Ամիսը առանց հայ գիրքի հարեւանութեան: Երեք օրեր Հ. Ք. Վարժարանի գրադարանը զարդարուեցաւ հայկական գեղեցիկ եւ գունաւոր նոր ու հին գիրքերով, հայկական զարդերով եւ խաղերով: Աշակերտները, մանկապարտէզէն սկսեալ իրենց հայերէնի ուսուցչուհիներու ընկերակցութեամբ այցելեցին գրադարան, լսեցին գիրքերու մասին, ծանօթացան տեսակներուն, լիցքաւորուեցան եւ գնելով հարստացուցին իրենց գրադարաններն ու մտապաշարը, խրախուսիչ էր որ աշակերտութեան մեծամասնութիւնը արձակուելէն ետք ծնողքի ընկերակցութեամբ կու գար որպէսզի որոշուած գիրքէն տարբեր գիրքեր կամ հետաքրքրական խաղեր եւս գնէ: Գիրքերը տրամադրած էր Ապրիլ Գրատունը, շնորհակալութեամբ կ'ուզենք նշել որ Պրն. Պեր ցուցադրութեան ակադամի վարժարանի կարգ մը դասարաններու գրադարանները ճոխացուց իր նուիրած 100 տոլարի արժողութեամբ հայերէն գիրքերով: Նաեւ շնորհակալութիւն Յրդ դասարանի ծնողներէն Տիկ. Սիտնա Խաչատուրեանի որ 200 տոլարի յատկացում մը ըրաւ ի նպաստ դասարանի գրադարանի ճոխացման:

- Հինգշաբթի Հոկտեմբեր 30ի յետմիջօրէին տեղի ունեցաւ Մշակույթի Ամսուան եզրափակիչ հանդիսութիւնը: Հ. Ք. Վարժարանի աշակերտութիւնը հաւաքուած էր Ս. Մեսրոպի եւ անոր աշակերտներուն դիմանկարներով, Ուիլիըմ Սարոյեանի խօսքերով եւ դիմանկարներով, հայոց ոսկեղնիկ տառերով, հայկական տարազներով եւ պտուղներու մանրանկարներով զարդարուած սրահ՝ ողբերգելու թարգմանչաց տօնը պատշաճ հանդիսութեամբ:

### ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆ

Շարունակուած էջ 7-էն

րին հետ: Աշակերտները լարուած ու մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան Տիկ. Ալիծին պատմածներուն, կրկնեցին անոր խօսքերը ու ծափահարութիւններով իրենց սէրն ու գնահատանքը յայտնեցին թէ՛ հէքեաթասացին եւ թէ՛ մեր աւանդութիւններուն:

Մերտինեան Վարժարանէն ներս, Հայ Մշակույթի ամիսը երկարաձգուեցաւ մինչեւ Նոյեմբեր 4, երբ Տիկ. Ալին Պատիկեան-Շիրաճեան, հեղինակ՝ մանկական գրքերու, այցելեց վարժարանս, ներկայացնելու համար իր վերջին գիրքը՝ «Վարդենին եւ Եղեւնին»: Դ. - Ը. կարգի աշակերտներուն խօսեցաւ հայկական աւանդութիւն-

ներու մասին, ապա կատարուեցաւ նոր գրքին գինեձօնը՝ նուազ 2 ուրով: Աւելի ուշ, նախամանկապարտէզէն մինչեւ Գ. կարգերու աշակերտներուն, պատասառի վրայ ներկայացուց ու պատմեց նոյն գիրքը:

Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը հիմնուած է 1982ին ու 26 տարիներէ ի վեր կը ծառայէ հայ համայնքին՝ կրթական ու քրիստոնէական ընտիր դաստիարակութեամբ: Վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of Schools and Colleges (WASC): Վարժարանի մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818) 907-8149:

### ՅՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Շարունակուած էջ 13-էն

թուականներն ու վայրերը: Եղիա Սրկ. 55 տարիներէ ի վեր Արեւմտեան Թեմէն ներս կը ծառայէ իր պատանի տարիքէն սկսեալ եւ չափազանց կարեւոր տեղեկութիւններ եւ լուսանկարներ հաւաքած էր: Ան մեծապէս օգտակար հանդիսացաւ պատմութեան հատորի հրատարակութեան գործին մէջ:

Առաջնորդ Սրբազան հայրը իր փակման խօսքին մէջ ներկայացուց խմբագրական կազմի անդամներ, Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեան, ընդհանուր խմբա-

գիր, Արժ. Տարզն Ա. Քհնյ. Գասպարեան, Արժ. Տ. Սիփան Ա. Քհնյ. Մխսեան, Բրշ. Էլըն Եղիա Սրկ. ձենտեան, Մաշտոց Զօպանեան, Նէնսի Արապեան եւ Բրշ. Մէթիւ Սրկ. Աշ, որոնք բացառիկ բծախնդրութեամբ եւ իրենց աշխուրջ աշխատանքով կարելի դարձուցած էին թեմի պատմութեան գիրքին ընծայումը: Սրբազան Հայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Պատմութեան Գիրքի հրատարակութեան մեկենասներ՝ Տիկ. Ռոգ Քէչոյեանին եւ Տէր եւ Տիկ. Նշան եւ Ռուպի Տէրտէրեանին եւ բարեմաղթութիւններ կատարեց անոնց համար:

Հանդիսութիւնը պաշտօնապէս ընթացք առաւ Հ. Հ. քայլերգի խմբային կատարողութեամբ, ապա Հայ Երկուսուր շարակալով, որոնց դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պողոտասարեան, հանդիսութիւնը շարունակուեցաւ օրուան հանդիսավար՝ Օր. Մարի Թիւթեւեանի բացման խօսքով: Ան դրուատելէ ետք Մեսրոպ Մաշտոցի հրաշալի գործը եւ իր աշակերտներու թարգմանչական աշխատանքները եւ աւելի վերջ դպրոցներ եւ ուսումնարաններ ստեղծելը, անդրադարձաւ այս տարուան հանդիսութեան նիւթը եղող Ուիլիըմ Սարոյեանի կեանքին, շեշտելով թէ «Ան ծնած էր հայրենիքէ հեռու, սակայն կրցաւ իր ազգային ոգին պահել եւ որպէս Հայ բայց Ամերիկացի գրող կրցաւ փոխանցել հայկական ոգին...»: Եւ աւարտեց խօսքը յորդորելով աշակերտները հետեւելու Սարոյեանի ուղիին:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ օրուան պատշաճ արտասանութիւններով, երգերով որոնք գեղեցկօրէն ընդմիջուեցան դաշնամուրի վրայ կատարուած նուագներով՝ կատարողութեամբ աշակերտներու: Հաճելի էր լսել հայ մանուկին մատղաշ մասներով մեկնաբանուած «Գարուն Եկաւ», «Հէյ Ձան», «Քոչարի», «Կարապի Երգ»ը եւ եզրափակիչ Կարէն Խաչատուրեանի «Լուիկներու Պար»ը:

Հանդիսութեան վերջին բաժնով ծրգ դասարանը ներկայացուց Ուիլիըմ Սարոյեանի կեանքը: Անոնք նախ անգլերէն լեզուով հարցազոյց մը ներկայացուցին՝ քաղուած գրականատէտ լրագրող Օշին Քէչիշեանի հարցազոյցներէն, Ռազմիկ Ռոշէ հարցատու պատկերը եղած էր Սարոյեանի իր հռչակաւոր պիւնրով, վերարկուով, անոր պարզ եւ համարձակախօս

հայրենիք անգլերէնին խառնելով կը պատասխանէր հարցազոյցը վարող՝ Մէրի Նաճարեանի հարցումներուն, որուն կաշնորդեց երկլեզու, մեծ գրողի կենսագրութեան ծանօթացումը՝ պատրաստուած եւ ներկայացուած ութերորդ դասարանի աշակերտներու կողմէ, իսկ աւարտին անոնք անմիջապէս բեմը վերածեցին դասարանի եւ շատ բնական խաղարկութեամբ սահուն եւ վարժ լեզուով հաճոյքի պահեր ստեղծեցին աշակերտներուն հրամցելով Ուիլիըմը աշակերտ, Սարոյեանի աշակերտական կեանքէն պատասառիկ մը, անոր մանկութեան շարաճիւղութիւնները ցոյց տուող: Կարելի չէր հանդիսութիւնը փակել առանց ունկնդրելու Ուիլիըմ Սարոյեան մեծ հայուն պատգամը, ուստի բեմ բարձրացան 5-6-7 դասարաններու աշակերտները եւ յաջորդաբար երեք լեզուներով՝ Հայերէն, Սպաներէն եւ Անգլերէն պատգամեցրին «Կ'ուզեմ Տեսնել»ը պատգամեցրի հայ ժողովուրդի տուրու նկարագրի մասին:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը տուաւ վարժարանի տնօրէնուհի՝ առաքինագարդ Քոչր Լուսիա, որ աշակերտները յորդորեց հայ մշակույթով լիցքաւորուելու ըսելով «...դուք պիտի ըլլաք մէկական ներկայացուցիչներ ձեր ազգին երբ այս վարժարանէն երթաք օտար երկրորդականներ եւ համալսարաններ, հոս պէտք է պատրաստուիք որպէսզի լաւագոյնս ներկայացնէք հայութիւնը...» եւ քաջալերեց զանոնք իրենց տարած աշխատանքին համար, ապա շնորհաւորեց Հայերէն լեզուի դասատուները եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց՝ աշակերտներու կողմէ մատուցուած ծաղկեփունջներով:

Աշակերտութիւնը մեկնեցաւ «Տէրունական Աղօթք»ի երգեցողութեամբ, իրենց հետ տանելով Հայ Մշակույթէն պատասառիկներ:





2

alltime **armenian** favorites

**KOHAR**

Symphony Orchestra and Choir

**3 DVD  
PACK**  
INCLUDING SUBTITLED LYRICS  
+ 172 PAGE SONGBOOK

**3 CD  
PACK**  
+ 120 PAGE SONGBOOK

[www.hayasa.us](http://www.hayasa.us)